Այն օրը Գողգոթայի վրա

Շնորհակալություն, Նևիլ եղբայր: [Նևիլ եղբայրն ասում է. «Աստված օրհնի ձեզ, եղբայր»: Ծան. խմբ.]: Աստված օրհնի ձեզ, Նևիլ եղբայր: Անչափ շնորհակալ եմ:

2 Բարի լույս, բարեկամներ: Առանձնաշնորհում է այս առավոտ կրկին գտնվել այստեղ խորանում՝ ծառայել Տիրոջը, Խոսքը քարոզելու և հիվանդների համար աղոթելու միջոցով: Եվ ես անչափ շնորհակալ եմ այս օրվա համար:

3 Ես զարմացա, երբ որ ներս մտա: Մի եղբայր մոտեցավ ինձ և ասաց. «Ես չեմ ուզում լինել անարժան բորոտի նման, որ բժշկվեց»: Դա եղբայր Ռայթն է: Ես աղոթել էի նրա համար, և Տերը լիովին բժշկել էր նրան: Արցունքն աչքերին նա մոտեցավ, որ սեղմի ձեռքս և ասի, որ, որ կուզեր գոհություն հայտնել Տիրոջը բժշկության համար: Նա ուզում էր վերադառնալ և գոհություն մատուցել: Այն ամբողջությամբ անհետացել է: Հիմա նա, նա կատարյալ առողջ է: Մենք շնորհակալ ենք այդ վկայությունների համար:

4 Չա՛րլի, դու և եղբայր Ջեֆֆրին, եթե ուզում եք, մոտեցեք այստեղ և նստեք այս նստարաններին այստեղ: Մի քաշվեք, խնդրեմ, մի կանգնեք: Մյուս եղբայրն այնտեղ, Վուդ եղբայրն էլ, եկեք առաջ: Դուք...Այստեղ նստարանին մի քիչ, մի քանի ազատ տեղեր կան, ուստի կանգնելու կարիք չկա: Կարծեմ այստեղ մի քանի տեղ կա, և, այո, խնդրեմ, մի ամաչեք մոտեցեք և զբաղեցրեք այս տեղերը:

5 Մենք ուրախ ենք...Կարծեմ մի անգամ ասվել է. *«Ուրախանում էի, երբ ինձ ասում էին...»:* Աստված օրհնի ձեզ, եղբայր: [Մի եղբայրն ասում է. «Միշտ սիրել եմ մոտ լինել քարոզիչին»: Ծան. խմբ.]: Շնորհակալություն: Շնորհի...շնորհակալ եմ: *«Ուրախանում էի, երբ ինձ ասում էին. «Գնանք Տիրոջ տուն»:* Դա քրիստոնյայի առանձնաշնորհումն ու ուրախությունն է՝ Տիրոջ տուն գնալը:

6 Նայելով շուրջը և տեսնելով իմ ընկերներից շատ շատերին, ուրախությունից ուղղակի հրճվում եմ: Ուրախ

եմ տեսնել այստեղ եղբայր և քույր Դոուխներին Օհայոյից։ Տեսնում եմ եղբայր և քույր Արմսթրոնգներին այնտեղ՝ խորքում, նունպես Օհայոյից։ Թող Աստված բոլորիդ էլ օրհնի։ Եվ, ո՛հ, շուրջը նայելով շատերին ես տեսնում, դժվար է բոլորի անունները թվարկել։ Քույր Հուվեր, ուրախ եմ ձեզ տեսնել այս առավոտ, Քենթուկիից է։ Նաև Չարլիին և Նելլին, Ջեֆֆրի եղբորն ու իր ընտանիքը, և շատ շատերին, ովքեր եկել են ուրիշ քաղաքներից։

7 Ուստի մենք փառավոր ժամանակ ենք ակնկալում Տիրոջ մեջ այս առավոտ, սպասելով Աստծուն, որ հանդիպի մեզ և օրհնի մեր անձերը և մատուցի մեզ այն բաները, ինչի կարիքը որ մենք ունենք։

8 Հայացք գցելով դահլիճի վրա, եթե սկսեմ թվարկել իմ բոլոր ընկերներին, մի ամբողջ առավոտ անհրաժեշտ կլինի դրանց անունները թվարկելու համար։ Ես ինձ այնքան լավ եմ զգում, երբ վերադարնում եմ եկեղեցի և տեսնում եմ բոլոր մարդկանց այստեղ, հանդիպում եմ նրանց հետ։

9 Ի՞նչ կլինի, երբ մենք գնանք Երկինք, և հանդիպենք Այնտեղ՝ Աստծո Գահի շուրջ, հավերժական, հավիտենական հաղորդակցության այդ փառավոր ժամանակի համար, և այն օրհնությունների, որոնց մենք փայփայել ենք։ Մենք Այնտեղ Նրա նման կլինենք և Նրան կերպարանակից և Նրա Հոգով մեզ վրա՝ ամբողջ հավիտենություն Նրան երկրպագելու և ծառայելու համար, երբեք չենք հոգնի։

10 Պարզապես մտածե՛ք, ձեր պատկերացրած ցանկացած տեսակի զբաղմունքներից, որոնք սիրում եք, այնուամենայնիվ մի օր հոգնում եք դրանից։ Չա՛ըլի, ենթադրում եմ, որ ես ու դու այդ առումով ավելի շատ սկյուռ որսալն ենք սիրում, բայց, գիտեք, դրանից էլ ես հոգնում։

11 Ինձ, ինձ նաև դուր է գալիս գնալ արշավի, բարձրանալ լեռներ և պարզապես զբոսնել։ Բայց երբեմն դրանից էլ եմ հոգնում և ուզում եմ մեկ ուրիշ բանով զբաղվել։

12 Ինձ նաև դուր է գալիս մեքենա վարել։ Երբեմն հոգնում, ուժասպառ եմ լինում և նյարդերս տեղի են տալիս։ Թռնում եմ իմ մեքենան և գնում եմ, ղեկը բռնում և ճանապարհով գնում եմ, երգելով. «Ես այնքա՜ն ուրախ եմ, որ կարող եմ ասել նրանցից մեկն եմ» կամ դրա նման մի բան։ Պարզապես ղեկը բռնում և երգում եմ,

ոտքով խփում և գոռում եմ: Բայց դե, որոշ ժամանակ անց հոգնում եմ, իսկ հետո վերադառնում եմ տուն և սկսում եմ ուրիշ բանով զբաղվել:

13 Բայց երբ մենք սկսենք երկրպագել Աստծուն այդ նոր Թագավորության մեջ, այնտեղ այլևս հոգնեցնող պահ չի լինի, միայն, միայն օրհնություն է լինելու շարունակ: Բայց, անշուշտ, այդ ժամանակ մենք փոխված կլինենք: Այնպիսին չենք լինի, ինչպիսին հիմա ենք: Մենք այլ, ուրիշ արարածներ կլինենք, քան հիմա ենք: Ուստի մենք ուրախ ենք:

14 Նոր միտքս եկավ: Չգիտեմ երբևէ արել ես դա, թե ոչ, ասել եմ, թե ոչ: Որոշ ժամանակ առաջ եղբայր Չարլին, ես ու ինքը Քենթուկիում էինք, և նա ասաց. — Բրանհա՛մ եղբայր, կարծո՞ւմ ես Հազարամյա թագավորության մեջ ես և դու սկյուռերի վրա որս անելու ենք:

— Ես այդպես չեմ կարծում, Չարլի:

15 — Դե, մեզ դա շատ էր դուր գալիս,— ասաց,— դու, դու կարծում ես Հազարամյա թագավորության ժամանակ որս անելո՞ւ ենք:

— Ոչ, Հազարամյա թագավորության ժամանակ ոչ մի բան չի սպանվելու:

— Դե, դա մեզ ուղղակի դուր էր գալիս:

16 — Չա՛րլի, ի՞նչ կլիներ, եթե ես կարողանայի քեզ համոզել, որ դու մի ժամանակ խոզ ես եղել, և որ գնալով բարձրացել ու ավելի բարձր էակ՝ մարդ ես դարձել: Երբևէ կգնայի՞ր, կուզենայի՞ր վերադառնալ և խոզի հաճույքները վայելել:

— Ո՛չ:

17 — Տե՛ս, հիմա դու մարդ ես, խոզից ավելի բարձր լինելով, դու այլևս չէիր ուզենա խոզ լինել, — ասացի,— հիմա դա տաս հազարով բազմապատկիր, և ահա թե ինչպիսին կլինես, երբ փոխվես հիմիկվա վիճակից նրան, ինչին կլինես: Դու էլ երբեք չէս ուզենա նորից մարդ լինել:

18 Դա այդպես է: Դա այլ բան է լինելու: Այս մտքից միայն այնքան եմ ուրախանում, իմանալով, որ մի օր մենք ավելի բարձր ենք բարձրանալու:

19 Դե, հիմա, եթե Տերը կամենա, հաջորդ կիրակի, որը լինելու է մոտավորապես...Այնուհետև իմ լավ բարեկամներից մեկի հետ մեկնելու եմ, գնալու եմ Վայոմինգ, ավելի ճիշտ՝ Այդահո, իմ լավ բարեկամներից

մեկի՝ եղբայր Միներ Արգանբրայթի, Կլայտ Սանմոռի՝ Քրիստոնյա Գործարարների հետ։

20 Եկող շաբաթ, մեկ շաբաթից, այսինքն՝ 7-ին, պետք է լինեմ Դալլասում, Տեխաս, «The Voice of Healing»-ի համաժողովին։ Եվ ես խոսելու եմ 7-ին երեկոյան։ Այնուհետև կվերադառնամ, որ եղբայր Արգանբրայթի և քրիստոնյա գործարարների հետ գնամ Այդահո։ Եվ հնարավոր է մեկնելուց առաջ մի գիշեր մնանք Միննեապոլիսում։ Այնուհետև կունենանք քրիստոնյա գործարաների մեկ նախաճաշ։

21 Եթե Տերը կամենա, եկող կիրակի առավոտ ուզում եմ նորից վերադառնալ այստեղ՝ խորան, եթե կարելի է և Տիրոջ կամքը լինի։ Եվ ուզում եմ խոսել այս թեմայով՝ *«Պտտահողմը քամու մեջ»,* եթե Տերը կամենա։ Սա ամբողջ շաթաթ կարծես, թե սրտումս լիներ։

22 Նախորդ առավոտ կանուխ, առավոտյան ժամը չորսի կողմերը արթնացա և այս միտքը ստացա. «Այն օրը Գողգոթայի վրա»։ Եվ այսօր ես ուզում եմ խոսել դրա մասին՝ *«Այն օրը Գողգոթայի վրա»։*

23 Իսկ այժմ ընթերցանության համար եկե՛ք անդրադառնանք մեր Սուրբ Գրքերին, Գրություններին, Մատթեոսի Ավետարանի 27-րդ գլխին։ Կսկսենք 27-րդ համարից և մի հատված կկարդանք այս Գրությունից, մեր հիմքը դնելու համար, հետո անմիջապես կսկսենք։ Եվ քարոզչական ծառայութունից հետո աղոթելու ենք հիվանդների համար։

24 Եվ, ո՛հ, վերջին անգամ այստեղ լինելուց հետո, ուղղակի վերադառնալով ծառայության նոր կարգին, ես այդ ժողովից ստացա այնքան շատ արձագանք-վկայություններ, որքան որ երկար ժամանակ չէի ստացել։

25 Մի բան կա, այն է, որ պետք է հաղորդակցվես մարդու հետ, անկախ այն բանից, թե ինչքան գերբնական բան է ցույց տրվում։ Բայց տեսե՛ք, բժշկությունը պետք է հիմնվի անհատի հավատքի վրա։ Հիմա, եթե անհատը հավատք ունի…

26 Եվ նրանք տեսնում են, թե ինչպես է օրինակ Սուրբ Հոգին անցնում լսարանով և ասում է. *«Այսինչ-այնինչ* բաներն են կատարվել։ Եվ դա, դուք *այսինչ-այնինչն եք,* անունը։ Եվ դուք *այսինչ* տեղից եք եկել։ Եվ դուք *այսինչ*

բանն եք արել: Եվ դա *այսպես* կլինի»: Եվ տեսնում են, որ այդ ամենը այդպես էլ լինում է:

27 Մինչդեռ անհատը, որ նստած է այնտեղ, պետք է նայի վեր և ասի. «Դա պետք է որ Աստված լինի: Ես ընդունում եմ իմ բժշկությունը»:

28 Բայց դրա փոխարեն անհատն ասում է. «Ձեռք դրեք ինձ վրա և աղոթեք ինձ համար, որ բժշկվեմ»: Բայց այստեղ՝ Ամերիկայում մեզ այդպես են սովորեցրել, և, այսպես դրան հավատալ: Եվ դա, անշուշտ, Աստվածաշնչի համաձայն է:

29 Բայց հիմա մենք հայտանբերում ենք Աֆրիկայում, ինչպես նաև տարբեր վայրերում այն, որ հենց դրա նման մի բան է կատարվում, ողջ լսարանը միաժամանակ բարձրացնում է իր ձեռքերը և ընդունում են իրենց բժշկությունը, որովհետև նրանց ոչինչ չեն սովորեցրել: Հասկանո՞ւմ եք: Նրանց նույնիսկ բժշկություն չեն սովորեցրել: Հետո, երբ նրանք դա տեսնում են, հասկանում են, որ կա Աստված, որ կենդանի է: «Իսկ եթե Նա կենդանի է, ուրեմն Նա, Նա է գերագույնը և Նա, Նա է բժշկողը»: Եվ վերջ, որովհետև հիմքն արդեն դրված է, հիմունքները, որ Նա է բժշկողը, և բժշկում է մարդկանց: Հետո, երբ նրանք տեսնում են, թե ինչպես է Նրա ներկայությունը գործում Իր եկեղեցու միջոցով, այդժամ ասում են. «Դա կարգավորում է ամեն բան: Դա է այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք»:

30 Բայց մեզ սովորեցրել են «ձեռք դնել հիվանդների վրա», և դրա նման բաներ: Դա է պատճառը, որ Ամերիկայում սա այդքան էլ լավ չի գործում:

31 Հիմա, հիշե՛ք, հաջորդ կիրակի առավոտյան, եթե Տերը կամենա, Նևիլ եղբայրը, անշուշտ, դա կհայտարարի: Եվ… *Պտտահողմը քամու մեջ:*

32 Հիմա, ես մի քիչ ժամանակ էի ձեզ տվել, որպեսզի բացեք ձեր Աստվածաշնչերը, Մատթեոսի Ավետարանի 27-րդ գլուխը: Եկե՛ք սկսենք կարդալ Մատթեոսի Ավետարանի 27-րդ համարից: Հիմա ուշադիր լսեք, երբ կարդում ենք:

> Եվ *կուսակալի զինվորները Հիսուսին տարան պալատ և ամբողջ զորագունդը հավաքվեց Նրա շուրջը:*
>
> *Եվ մերկացնելով Նրան՝ մի կարմիր քղամիդ գցեցին վրան:*

Եվ փշերից պսակ հյուսեցին ու դրեցին Նրա գլխին և մի եղեգ՝ Նրա…ձեռքը ու ծնկի գալով Նրա առջև՝ ծաղրում էին ու ասում. «Ողջո՜ւյն Քեզ, հրեաների՛ թագավոր»:

Եվ Նրա վրա թքելով՝ վերցնում էին եղեգը ու հարվածում Նրա գլխին:

…ծաղրելուց հետո Նրա վրայից հանեցին քղամիդը և Իր հանդերձները հագցնելով՝ տարան Նրան խաչելու:

Դուրս ելնելով՝ գտան կյուրենացի մի մարդ՝ Սիմոն անունով և պարտադրեցին, որ խաչը տանի:

Եվ երբ բարձրացան, գնացին *Գողգոթա կոչված վայրը, որ նշանակում է «գանգի տեղ»,*

Նրան լեղիով խառնված քացախ տվեցին, որ խմի…երբ համտեսեց, չուզեց խմել:

Եվ Նրան խաչը հանեցին ու Նրա հանդերձները վիճակ գցելով, բաժանեցին իրենց մեջ, որ կատարվի մարգարեի միջոցով ասվածը. «Իմ հանդերձներն իրար մեջ բաժանեցին և Իմ պատմուճանի վրա վիճակ գցեցին»:

…այնտեղ նստած՝ հսկում էին Նրան.

և Նրա դեմ մեղադրանքը գրված ամրացված էր գլխավերևում, թե՝ «Սա է Հիսուսը՝ հրեաների թագավորը»:

Այն ժամանակ Նրա հետ խաչվեցին երկու ավազակներ՝ մեկը աջ կողմում, մյուսը՝ ծախ կողմում:

Եվ մոտով անցողները հայհոյում էին Նրան, շարժում էին գլուխներն

ու ասում. «Դո՛ւ, որ տաճարը պիտի քանդեիր ու երեք օրում վերակառուցեիր, փրկի՛ր Քեզ: Եթե Աստծո Որդին ես, իջի՛ր խաչից»:

Գլխավոր քահանաները՝ դպիրների ու ավագների հետ նույնպես, ծաղրում էին Նրան և ասում.

«Ուրիշներիվն ազատեց, իսկ իրեն չի կարողանում ազատել: Եթե Իսրայելի թագավորն է, հիմա թող իջնի խաչից, ու մենք կհավատանք Իրեն:

Աստծուն է հուսացել, հիմա թող Նա փրկի Իրեն, եթե կփրկի Նրան, որովհետև ասում էր, թե Աստծո Որդին եմ»:

Նրա հետ խաչված ավազակներն էլ նույն ձևով նախատում էին իրենց...*Նրան:*

Եվ վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը ամբողջ երկրի վրա խավար եղավ:

Եվ մոտ իններորդ ժամին, Հիսուսը բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Էլի՜, Էլի՜ լամա՞ սաբաքթանի». այսինքն՝ «Աստվա՛ծ Իմ, Աստվա՛ծ Իմ, ինչո՞ւ Ինձ լքեցիր»:

Այնտեղ կանգնածներից ոմանք, երբ լսեցին, ասացին. «Նա Եղիային է կանչում»:

Եվ...մեկն անմիջապես վազեց, քացախով թաթախված սպունգը վերցրեց ու ամրացնելով մի եղեգի վրա՝ տվեց Նրան, որ խմի:

Իսկ ոմանք էլ ասում էին. «Թո՛ղ, տեսնենք Եղիան պիտի գա՞ Նրան փրկելու»:

Հիսուսը դարձյալ մեծ ձայնով աղաղակեց և Հոգին ավանդեց:

Եվ ահա, տաճարի վարագույրը պատռվեց երկու մասի՝ վերևից մինչև ներքև: Եվ երկիրը շարժվեց ու քարերը ճեղքվեցին:

...գերեզմանները բացվեցին ու շատ սուրբ ննջեցյալների մարմիններ հարություն առան

ու գերեզմանից *ելնելով՝ Նրա հարությունից հետո մտան սուրբ քաղաքն ու շատերին երևացին:*

Իսկ հարյուրապետը և նրա հետ՝ Հիսուսին հսկողները, երբ տեսան երկրաշարժն ու պատահածները, սաստիկ վախեցան և ասացին. «Ճշմարիտ է, որ Նա Աստծո Որդին էր»:

33 Մի պահ խոնարհենք մեր գլուխները աղոթքի համար:

34 Տե՛ր, մենք գիտենք, որ Դու Աստված ես: Եվ դա...Սուրբ և սրբազան այս Խոսքը ընթերցելուց հետո մենք առաջվա պես տեսնում ենք, որ Քո բնությունը չի փոխվել: Դու միշտ Աստված ես մնում: Եվ թվում էր, թե Հիսուսը որևէ օգնություն չէր ստանա, որ Նա չար ձեռքերով վերցվեց և Նրան կտոր–կտոր էին անում, դեմքին թքում, ծաղրում և խաչն էին հանում, Նա արյունահոս էր լինում, մահանում էր: Եվ թվում էր, թե ոչ մի տեղից օգնություն չկա, մինչև

անգամ Նա Ինքն աղաղակեց. *«Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ Ինձ թողեցիր»:*

35 Բայց Դու գործում ես այն պահին, երբ ոչինչ չի կարող գործել: Մեզ տրված է իմանալ, Տե՛ր, որ, եթե կան գետեր, որոնք չենք կարող անցնել, եթե կան սարեր, որոնց միջով չենք կարող անցնել, Աստված մասնագիտացած է անելու բաներ, որոնք ուրիշները չեն կարող անել:

36 Դու այս գործում մասնագետ ես, որովհետև գիտեիր այն օրը Գողգոթայում գտնվելու պատճառը: Դու, լինելով Աստված՝ անսահման Մեկը, գիտեիր, որ այդ ժամը պիտի գա: Բայց երբ դա կատարվեց, այդժամ ցույց տվեցիր, որ Դու Աստված ես: Դու ցույց տվեցիր, թե Ով է տերը: Դու ցնցեցիր երկիրը և հողի մեջ ննջող սրբերը դուրս եկան գերեզմանից: Դու երեկոյան արևը գիշերվա խավարի պես սևացրիր, ցույց տալով, որ Դու ես Աստվածը: Սակայն թվում էր, թե Դու այնքան երկար ժամանակ լուռ էիր:

37 Թող այստեղից այս եզրակացությունն անենք, որ քանի դեռ քայլում ենք Հոգով, առաջնորդվում ենք Աստծո ձեռքով, նույնիսկ եթե ամեն ինչ այլ կերպ է թվում, մենք միևնույն է դեմքով ուղղված ենք Գողգոթային. Աստված կխոսի ճիշտ ժամին և ճիշտ ժամանակին:

38 Այժմ, Հա՛յր Աստված, խնդրում ենք, որ ներես մեր մեղքերն ու հանցանքները: Խնդրում ենք, որ Քո Հոգին առաջնորդի մեզ: Առաջնորդիր մեզ ինչպես Աղավնին առաջնորդեց Գառնուկին: Թող հնազանդ լինենք ինչ էլ մեզ պատահի, իմանալով սա, որ Աստծո ամեն ինչ բարու համար է գործում, և գիտենք, որ ամեն բան լավ կլինի:

39 Եղիր մեզ հետ այսօր այս ծառայության ընթացքում: Խնդրում ենք, որ փրկես նրանց, ովքեր պետք է փրկվեն և որոնում են փրկությունը: Լցրու հավիտենական կյանքով նրանց, ովքեր փնտրում են այն: Խնդրում ենք, որ բժշկես հիվանդներին և տկարներին, ովքեր եկել են բժշկություն փնտրելու: Եվ մենք կփառաբանենք Քեզ դրա համար: Մենք այդ խնդրում ենք Քո Որդու՝ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Անունով: Ամե՛ն:

40 Հիմա, այս առավոտվա քարոզի ընթացքում մենք ուզում ենք ձեր ուշադրությունը հրավիրել այն տեքստի վրա, որից ես ընտրել եմ խոսել. *«Այդ օրը Գողգոթայում»:*

41 Թվում է, թե սա մի փոքր ժամանակին չէ: Սա պետք է լիներ Ավագ ուրբաթ օրը: Գողգոթան ամեն օր պետք է հիշել: Մենք այնքան շատ ենք կարդացել և լսել

դրա մասին։ Ժամանակների սկզբից ի վեր քարոզիչները քարոզել են դրա մասին։ Դարերի ընթացքում երգիչները երգել են դրա մասին։ Դեռ կատարվելուց չորս հազար տարի առաջ մարգարեները կանխագուշակել էին դրա մասին։ Եվ մեր օրերի մարգարեները մատնանշում են այն ժամանակը, թե երբ է դա կատարվել։ Սա այնպիսի՞ կարևոր օր է։ Սա բոլոր օրերից կարևորագույն օրերից մեկն է, որով Աստված երկիրը լուսավորեց։

42 Եվ եթե Գողգոթան այդքան կարևոր է մարդկության համար, կարծում եմ, լավ կլինի, որ հետ գնանք և ուսումնասիրենք, տեսնենք, թե ինչ նշանակություն ունի այն մեզ համար։ Որովհետև համոզված եմ, որ այս ուշ ժամում, որում ապրում ենք, մենք փնտրում ենք Աստծո բոլոր կարևոր բաները, և այն ամենը, ինչ մենք պետք է պարզենք, այստեղ ենք դրա մասին սովորելու համար, որ տեսնենք, թե ինչ է պատրաստված մեզ համար, թե ինչ է Աստված արել մեզ համար և ինչ է խոստացել անել մեզ համար։ Դրա համար ենք մենք գալիս եկեղեցի։ Դրա համար է քարոզիչը քարոզում, ուսումնասիրում և խորհում Սուրբ Գրքի շուրջ և ոգեշնչում փնտրում, որովհետև նա Աստծո ժողովրդի համար հանրային ծառա է։ Եվ նա փորձում է գտնել մի բան, որ…որ Աստված կասեր Իր ժողովուրդին, ինչ-որ բան, որ կօգնի նրանց։ Գուցե, հնարավոր է, որ դա մեղադրեր նրանց իրենց մեղքերի մեջ, բայց կօգներ նրանց բարձրանալ, որ հրաժարվեն իրենց մեղքերից, և հետո վեր կենան ծառայելու Տիրոջը։ Եվ ծառայողները պետք է փնտրեն այս բաները։

43 Եվ քանի որ այդ օրն այսքան կարևոր է, ամենամեծ օրերից մեկն է, եկե՛ք քննենք երեք տարբեր բաներ, թե ինչ նշանակութուն ունի այդ օրը մեզ համար։ Կարող էինք ընտրել հարյուրավոր բաներ, բայց այսօր ես ընտրել եմ ընդամենը երեք տարբեր կենսական բաներ, որոնք հաջորդ մի քանի որոպեների ընթացքում ուզում եմ ուսումնասիրենք, թե ինչ նշանակություն ունի Գողգոթան մեզ համար։ Եվ ես աղոթում եմ, որ դա հանդիմանի յուրաքանչյուր ներկա գտնվող մեղավորին, այն մղի յուրաքանչյուր սուրբին ծնկների վրա իջնել, հիվանդին՝ ուղղել իր հավատքն առ Աստված և հեռանալ այստեղից բժշկված, մեղավորին՝ փրկվել, հավատքից ընկածին՝ հետ վերադառնալ և ամաչել իր համար, սրբին՝ ուրախանալ և ձեռք բերել նոր հիմք և նոր հույս։

44 Մեկ կարևոր բան, որ Գողգոթան նշանակում է մեզ և

աշխարհի համար, այն է, որ դա մեկ անգամ և ընդմիշտ մեղքի հարցը լուծեց: Մարդը մեղքի մեջ հանցավոր գտնվեց: Եվ մեղքի համար այնպիսի վարձք էր, որը ոչ մի մարդ չէր կարող վճարել: Վարձքն այնքան մեծ էր, որ չկար մեկը, որ կարողանար այն վճարել: Ես հավատում եմ, որ Աստված էր այդպես սահմանել, որ վարձքն այնքան մեծ լինի, որ ոչ ոք չկարողանա այն վճարել, որպեսզի Ինքը կարողանար դա անել: Հիմա, մեղքի վարձքը մահն է: Եվ մենք բոլորս էլ մեղքի մեջ ենք ծնվել, անօրենության մեջ ենք ձևավորվել, եկել ենք աշխարհ՝ սուտ խոսելով: Հետևաբար մեզանից ոչ ոք արժանի չէր, և աշխարհում չգտնվեց մեկը, որ արժանի լիներ:

45 Մեղքը չսկսվեց երկրի վրա: Այն սկսվեց երկնքում: Լյուց-...Լյուցիֆերը՝ սատանան, նախքան երկիրը զարկելը, դատապարտված արարած էր դարձել իր անհնազանդության պատճառով: Մեղքը սկսվեց երկնքում, որտեղ Աստված Հրեշտակներին և մյուսներին դրեց այն նույն հիմքի վրա, որին դրել է մարդկությանը. գիտություն, գիտության ծառի, Կենաց ծառի և գիտության ծառի հիման վրա, որտեղ մարդը կարող էր կատարել իր ընտրությունը: Եվ երբ նախապատվությունը տրվեց Լյուցիֆերին իր ընտրությունը կատարելու, նա ուզեց մի բան, որն ավելի լավն էր, քան Աստծունը: Այնտեղից էլ սկսվեցին անախորժությունները:

46 Մեղքի համար մեկ բան էր պահանջվում: Պահանջը մահն էր: Վարձքը մահն էր: Եվ դա է...մենք կարող ենք մանրամասնությունների մեջ մտնել, որովհետև ես չեմ հավատում, որ միայն մեկ մահ կա: Կա մեկ կյանք: Եվ ես կարծում եմ, որ մարդ, ով հավիտենական կյանք ունի երբեք չի կարող մահանալ: Նաև կարծում եմ, որ կա մեղանչող անձի անբողջական ոչնչացում, որովհետև Աստվածաշունչն ասում է. «Այն անձը, որ մեղք է գործում, անշուշտ, պիտի մեռնի»: Ոչ թե մարդը, այլ՝ «անձը (ДУША), որ մեղք է գործում»: Ուստի, սատանան անշուշտ պետք է մեռնի, ամբողջությամբ ոչնչացվի: Ինչպես ես համաձայն չեմ այն ունիվերսալիստների հետ, ովքեր ասում են, որ սատանան կփրկվի: Նա մեղանչել է, և նա՛ է մեղքի հեղինակը: Եվ նրա անձը մեղանչել է, իսկ նա հոգի էր: Այդ հոգին ամբողջությամբ կոչնչացվի, կմոխրանա:

47 Եվ երբ մեղքը դեռ ամենսկզբում հարվածեց երկիրը, սև սավանի նման իջնելով երկնքից, այն բառացիորեն կաթվածահար արեց երկիրը: Այն երկրի վրա եղած

յուրաքանչյուր արարածին, ինչպես նաև Աստծո ողջ ստեղծագործությունը գցեց գերության մեջ: Մարդը հայտնվեց մահվան, հիվանդության, խնդիրների և տառապանքների գերության ներքո: Դրա հետ միասին ընկավ նաև ողջ ստեղծագործությունը: Մեղքն այն անզգայացնող միջոց էր, որն իրականում կաթվածահար արեց երկիրը: Այդ ժամանակ մենք անհույս մնացինք այստեղ, որովհետև երկրի վրա եղած ամեն արարած, ամեն ծնվածը ենթարկվում էր իրեն:

48 Դրա համար այն պետք է գար մի Վայրից, որտեղ ոչ մի մեղք չկար: Դա չէր կարող գալ երկրից: Մեզանից ոչ մեկը չէր կարող փրկել մյուսին: Դա պետք է մեկ Ուրիշից գար:

49 Դրա համար, երբ մարդը գիտակցեց, որ բաժանված է իր Աստծուց, դարձավ թափառական: Նրանք լաց էին լինում, աղաղակում և աշխատում էին, թափառում էին սարերով և անապատներով, փնտրելով մի Քաղաք, որի ճարտարապետն ու արարիչն Աստված էր: Որովհետև գիտեր, որ եթե երբևիցէ վերադարձնա Աստծո Ներկայության մեջ, կկարողանա խոսել Նրա հետ դրա մասին: Սակայն հետդարձի ճանապարհ չկար: Նա դարձել էր կորսված: Չգիտեր, թե որ կողմ շրջվեր, դրա համար նա պարզապես ճանապարհ ընկավ, թափառելով, փորձելով գտնել ինչ-որ տեղ, որտեղ կարողանա հետդարձի ճանապարհ գտնել դեպի այդ Վայրը: Իր ներսում ինչ-որ բան իրեն ասում էր, որ նա եկել էր մի Վայրից, որը կատարյալ էր: Այս առավոտ չկա այստեղ մի մարդ՝ այս լսարանում կամ ձայներիզները լսող լսարանում, որովհետև սա գնալու է ամբողջ աշխարհով մեկ, չկա մի մարդ այստեղ կամ որևէ տեղում, ով այդ կատարելությունը չի փնտրում:

50 Վճարում եք ձեր հաշիվները, մտածում եք. «Ամեն բան կարգավորվեց»: Հենց հաշիվները վճարված են, այդ ժամանակ ինչ-որ մեկը ընտանքում հիվանդանում է: Երբ հիվանդությունը վերանում է, այդժամ ավելի շատ հաշիվներ ես ունենում վճարելու: Առաջին բանը, որ նկատում ես, այն է, որ մազերդ ճերմակում է, և այդ ժամանակ ուզում ես նորից երիտասարդ լինել: Եվ այդ մեղքի ալիքի պատճառով շարունակ, անընդհատ ինչ-որ բան կատարվելու է: Բայց սրտիդ խորքում, քանի որ փնտրում ես այն, դա ցույց է տալիս, որ ինչ-որ տեղ կատարելություն կա: Ինչ-որ տեղ ինչ-որ բան կա:

51 Այդ իսկ պատճառով էլ շատ հաճախ այսօր մեղավորը

դեռ թափառում է: Երիտասարդ գեղեցիկ աղջիկը կտրում է իր խոպոպները, որ ճանաչված լինի, ներկում է երեսը, որ գեղեցիկ տեսք ունենա, հագնում է այնպիսի հագուստ կազմվածքը ցույց տալու համար: Որովհետև դա միակ բանն է, որ նա կարող է գտնել, գտնելով ինչ-որ տեղ, փորձել գտնել մի բան հետ վերադառնալու նրան, երբ նա կկարողանա այնպես անել, որ տղամարդիկ սուլեն նրա հետևից, ձեռքով թափահարեն և սիրախաղ անեն նրա հետ: Երիտասարդ տղամարդն էլ նույնն է անում կնոջ հանդեպ, ջանալով իրեն ավելի գրավիչ դարձնել նրա համար: Հարևանները տուն են կառուցում և անում են որոշակի ձևով, որովհետև այն մի փոքր ավելի լավ տեսք կունենա, քան իր հարևանինը: Մենք միշտ ինչ-որ բան ենք փնտրում, և ինչ-որ բան շարունակում է ընթանալ մի քիչ դրանից ավելի վեր: Երիտասարդ տիկինը գտնում է մեկ այլ օրիորդի ավելի հայտնի, քան ինքն է: Հարևանը գտնում է մի տուն, որն ավելի լավ տեսք ունի, քան իրենը: Կինը գտնում է մեկ այլ կնոջ որոշակի ձևով հագնված, ավելի լավ տեսքով, քան ինքն է հագնված:

52 Մեր մեջ ինչ-որ բան կա, որը ինչ-որ բան է փնտրում, և դա ցույց է տալիս, որ մենք կորսված ենք: Մենք ուզում ենք գտնել մի բան, որը մեզ կտանի այդ բավարարվածությանը, որ կհագեցնի այդ ներքին քաղցը, սակայն թվում է, թե չենք կարողանում գտնել այն: Դարեր շարունակ մարդիկ ջանացել են գտնել այն: Նրանք լաց են եղել, աղաղակել են դրա համար: Նրանք իրենց իմացածի չափով ամեն բան արել են, սակայն դեռ չեն գտել դա, թափառելով ամբողջ աշխարհով մեկ:

53 Ի վերջո մի օր, և դա այն օրն էր Գողգոթայում, Մեկն իջավ Փառքից: Մեկը՝ Հիսուս Քրիստոս Անունով, Աստծո Որդին, ով Փառքից եկավ, և Գողգոթան իրականություն դարձավ: Դա այն օրն էր, երբ գինը վճարվեց, և մեղքի հարցը մեկընդմիշտ լուծվեց: Եվ դա ճանապարհ բացեց դեպի այն բանը, որին մենք քաղցած և ծարավ էինք: Դա տեղ բացեց գոհունակության: Չկա մի մարդ, ով երբևէ այցելած լինի Գողգոթան և տեսնի այն այնպես, ինչպես որ էր, և շարունակի նույնը մնալ: Այն ամենը, ինչ նա երբևէ ցանկացել կամ փափագել է, բավարարվում է, երբ գալիս է այդ վայրը:

54 Դա այնքան կարևոր օր և այնքան կարևոր բան էր, որ ցնցեց երկիրը: Այնպես ցնցեց երկիրը, ինչպես նախկինում չէր ցնցել: Երբ Հիսուսը մեռավ Գողգոթայում և վճարեց

մեղքի գինը, այս մեղավոր աշխարհը խավարեց: Կեսօրին արևը մայր մտավ, այն նյարդային խանգարում ունեցավ: Քարերը ցնցվեցին, սարերը ճեղքվեցին և մեռածների մարմինները գերեզմանից դուրս եկան:

55 Ի՞նչ արեց դա: Աստված կենտրոնացավ Գողգոթայի վրա: Նա հավիտյան խոցեց այդ կենդանուն, որ սատանա է կոչվում: Այդ ժամանակվանից նա ավելի կատաղի է դարձել, որովհետև դա Լույս բերեց մարդկությանը: Եվ յուրաքանչյուրը գիտի, որ վիրավորված կենդանին ամենադաժանն է, նա սողում է կոտրված մեջքով: Հիմա, սատանան Գողգոթայի վրա տապալվեց: Երկիրը ապացուցեց, որ դա այդպես է:

56 Ամենաբարձր գինը, որ երբևէ վճարվել է, և Միակը, ով կարող էր այն վճարել, եկավ և արեց դա Գողգոթայում: Ահա թե որտեղ ամենամեծ գինը վճարվեց: Դա նշանակություններից մեկն է: Աստված դա էր պահանջել: Ոչ ոք արժանի չէր: Ոչ ոք ի վիճակի չէր: Ոչ ոք չէր կարող դա անել: Եվ Աստված Ինքը եկավ, մարդացավ, ապրեց մարդկային կյանքով մարմնավոր ցանկություններով և խաչվեց Գողգոթայի վրա: Եվ այտեղ, թեև սատանան մտածում էր, որ Հիսուսը չի անի դա, չի անցնի դրա միջով, Նա անցավ Գեթսեմանի և այն բոլոր փորձությունների միջով, որ որևէ մեկը երբևէ կանգնել է: Նա բոլոր մարդկանց նման անցավ դրա միջով, բայց Նա գինը վճարեց:

57 Եվ դա էր, որ երկիրը մթացրեց, ինչպես անզգայացուցիչը վիրահատությունից առաջ: Երբ բժիշկը մարդուն անզգայացնող միջոց է տալիս, նա անզգայացնում է նրան մինչև վիրահատություն անելը: Եվ երբ Աստված պետք է վիրահատեր Եկեղեցին, աշխարհը անզգայացավ, բնությունը ջղաձգվեց: Զարմանալի՞ չէ: Աստված մարդկային մարմնով մահանում էր: Հենց այն ժամն էր փնտրում աշխարհը, սակայն նրանցից շատերը չգիտեին դա:

58 Ինչպես այսօր է՝ շատերն են սպասել այդ բաներին, և այնուհանդերձ չեն ճանաչում դրանք: Նրանք չեն տեսնում ելքի ճանապարհը: Նրանք դեռևս փորձում են հաճույքներ և աշխարհիկ բաներ փնտրել, փորձելով ելք գտնել:

59 Կային շատ ցուցանակներ, որոնք մատնանշում էին այդ օրը, շատ մեծ նախանշաններ: Այն նախապատկերված էր գառով, ցուլով, տատրակով և բոլոր այլ բաներով, սակայն դա չէր կարող կոտրել այն:

Դա չէր կարող կոտրել մահվան իշխանությունը, որով սատանան պահում էր երկիրը։

60 Որովհետև սատանայինն էր երկիրը, հենց այն ժայռերը, որոնց վրա մի ժամանակ նա երկրի վրա վեր ու վար քայլում էր, ծծումբ այրելով։ Լյուցիֆերը արշալույսի որդին էր, և նա քայլում էր երկրի վրա, երբ այն այրվող հրաբուխ էր։ Այդ նույն ժայռերը, որոնք սառչել էին, երբ Հիսուսը մեռավ Գողգոթայում, դուրս ժայթքեցին երկրից։

61 Գինը վճարված էր, և սատանայի գերությունը տապալվեց։ Աստված վերադարձրեց մարդու ձեռքերի մեջ հետդարձի ճանապարհը, այն, ինչ նա փնտրում էր։ Նա այլևս լացելու կարիք չուներ։ Երբ Նա այնտեղ՝ Գողգոթայում կոտրեց սատանայի ողնաշարը, հիվանդության, մեղքի որկորը։ Դա երկրի վրա եղած ամեն մահկանացու արարածին վերադարձնում է Աստծո Ներկայության մեջ՝ մեղքերի ներումով։ Ալելո՛ւիա։ Մեր մեղքերը ներված են։ Սատանան այլևս չի կարող մեզ զրպարտել Աստծո առջև։

62 Այնտեղ ճանապարհ է հարթվել։ Այնտեղ հեռախոս է տեղադրվել։ Այնտեղ դեպի Փառքը տանող գիծ է քաշված, և դա բոլորին հասանել է։ Եթե մարդը լի է մեղքերով, ուրեմն միացված է հին կենտրոնական կայանին։ Այդ մեղքը կարող է ներվել նրան։ Ոչ միայն դա, այլ այդ մեղքի համար գինը վճարված է։ Ո՛հ։ Պետք չէ ասել. «Ես անարժան եմ»։ Իհարկե, դու անարժան ես, երբեք էլ չես կարող արժանի լինել։ Բայց արժանի Մեկը զբաղեցրեց քո տեղը։ Դու ազատ ես։ Այլևս թափառելու կարիք չկա։ Կարիք չկա այստեղ՝ երկրի վրա հաճույք փնտրող մարդ լինելու։

Որովհետև Արյունով լցված մի աղբյուր
կա,
Որ հոսում է Էմմանուելի երակներից,
Որի մեջ մեղավորներն են սուզվում
Ու մեղքերից լվացվում։

63 Կարիք չկա կորսվելու։ Այնտեղ մայրուղի կա և Ճանապարհ, և դա կոչվում է սրբության Ճանապարհ։ Պիղծը չի անցնի դրա վրայով, որովհետև նախ նա գալիս է աղբյուրի մոտ, հետո մտնում մայրուղի։

64 Նա կոտրեց սատանայի ուժերը։ Բացեց դժոխքի դռները յուրաքնաչյուր մարդու համար, ով այս երկրում փակված էր բանտերում, վախենալով, թե երբ որ նա

մահանա, ինչ է լինելու նրա հետ: Գողգոթայում Նա բացեց այդ բանտի դռները և բոլոր գերիներին ազատ արձակեց: Այլևս կարիք չկա մեղքից տանջվելու: Կարիք չկա ձեր անդամները ենթարկեցնել մեղքին, խմիչքին, ծխելուն, խաղամոլությանն ու ստախոսությանը: Դուք կարող եք ազնիվ, արդար և շիտակ լինել: Եվ սատանան ոչինչ չի կարող անել դրա հետ կապված, որովհետև դու ձեռք ես բերել մի մալուխ, փրկօղակ, որը կապված է Դարերի Ժայռին: Ոչինչ չի կարող բաժանել ձեզ դրանից: Ոչ մի քամիներ չեն կարող սասանել ձեզ: Ոչինչ, նույնիսկ մահը չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ Քրիստոս Հիսուսումն է: Ահա թե ինչ էր Գողգոթան նշանակում:

65 Մարդիկ, ովքեր գերության մեջ էին ազատ արձակվեցին: Մարդիկ, ովքեր մի ժամանակ մահվան վախի ներքո էին, կարող են այլևս չվախենալ մահից: Մարդ, ով փնտրում է Քաղաք, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է, կարող է քայլել մայրուղու վրա և ուղղել իր հայացքը դեպի երկինք, որովհետև նա ազատ է: Ալելո՛ւիա: Նա փրկագնված է: Այլևս կարիք չկա թափառելու, որովհետև ճիշտն ու սխալը իմանալու ձև կա: Աստված մեզ կյանք է տալիս: Մեր մեղքերը վերացել են: Այդ օրը Գողգոթայում գինը վճարվեց: Երբ տեսնում ենք այդ ամենը, զարմանելի չէ, որ բանաստեղծը գրել է.

Ժայռեր պատռին, արեւն սեւնայ
Մինչ խաչին վրայ մեռնի Հիսուս
Եւ Իր մահուամբ կ՛անմահանայ
Հէք մահապարտ հոգիս անյոյս:

66 Աբրահամը այլևս կարիք չուներ երկրով մեկ թափառելու՝ փնտրելով քաղաքը: Մեղավորն այլևս կարիք չունի հարցնելու, թե արդյոք նա կարող է փրկվել, թե ոչ: Հիվանդը կարիք չունի հարցնելու, թե արդյոք նա կարող է բժշկվել, թե ոչ: Այդ օրը Գողգոթայում պատռված վարագույրը ճանապարհ բացեց դեպի լիակատար հաղթանակ: Աստված մեզ տալիս է Իր Հոգու զորությունները, հաղթական ապրելու այս բոլոր բաների վրա. միակ բանը, որ պահանջվում է, դրան հավատալն է: Դա տեղի ունեցավ այդ օրը Գողգոթայի վրա: Դրա նման օր երբեք չի եղել, և չի էլ ինելու: Այլևս դրա կարիքը չկա: Գինը վճարված է, և մենք փրկագնված ենք: Գոհությո՛ւն Աստծուն: Մենք փրկագնված ենք: Հարցեր այլևս չկան: Այլևս կարիք չկա դրա մասին ենթադրություններ անելու: Ամենը վերցված է: Վարագույրը հետ է քաշված, և մենք

դրված ենք մայրուղու վրա, որ այլևս չթափառենք, այլ հավատանք և պարզապես շարունակենք քայլել նույն ուղությամբ: Մենք քայլում ենք ուղղիղ Աստծո Ներկայության մեջ:

67 Աբրահամը գիտեր, ուրիշները նույնպես գիտեին, որ մինչ նրանք փնտրում էին Քաղաքը, գիտեին, որ իրենք Ինչ-որ տեղից էին: Ինչ-որ բան էր կատարվել: Նրանք ապրում էին կաթվածահար աշխարհում: Երկրաշարժեր և փոթարիկներ էին լինում, պատերազմներ և սպանություններ: Գայլը և գառը իրարով էին սնվում, ավելի ճիշտ՝ գայլը ուտում էր գառնուկին, առյուծը՝ էշին: Դա ճիշտ չի թվում: Ինչ-որ բան այնպես չէ: Նա գիտեր, որ ինչ-որ բան այնպես չէր: Եղբայրը եղբորն է սպանում, հայրը՝ որդուն, որդին՝ հորը: Ինչ-որ բան այնպես չէ: Նա ծեռանում է: Նա մահանում է: Նա մարում է: Վրա է գալիս հիվանդությունը: Նա գերության մեջ է: Ծառերն աճում են, բայց հավերժական չեն, չորանում են: Լեռները փոխվում են, ծովերը ցամաքում են, ջրերը նվազում են: Ինչ-որ բան այնպես չէ: Եվ նա փնտրում էր մի վայր, մի Քաղաք, որտեղ այլևս դրանք չեն լինի: Նա գիտեր, որ եթե երբևէ կարողանար վերադառնալ այդ Միակի Ներկայության մեջ, ով ամեն բան ճիշտ է արել, կկարողանար խոսել դրա մասին Նրա հետ:

68 Ո՜հ, ինչպիսի՜ առանձնաշնորհում է, ո՛վ մեղավոր, իմանալ այսօր, որ դու հիմա ունես այդ ճանապարհը: Այդ օրը Գողգոթայի վրա բացեց այդ ճանապարհը: Որովհետև բոլոր նախահայրերը որոնել և փնտրել են այն, իսկ Գողգոթան քեզ ձրի է դա տալիս: Ինչպե՞ս կարող ես դա մերժել: Ինչպե՞ս կարող ես դա մերժել՝ հարանվանությանը միանալու համար: Ինչպե՞ս կարող ես դա մերժել՝ փոխանակելով այն ինչ-որ բանով՝ աշխարհիկ հաճույքներով: Ինչո՞ւ դա չընդունել: Պատռված վարագույրը վերադարձնում է մարդուն Աստծո Ներկայության մեջ, առանց ոչ մի տեսակ մեղքի իր հաշվին: Եվ ճանապարհ է հարթեցնում նրա առջև դեպի այն, ինչ նա փնտրում էր. երկինք, փառք, խաղաղություն, հավիտենական կյանք, ամեն բան անմիջապես նրա առջև է:

69 Այդ օրը մահացու հարված էր սատանայի ուժին: Ամեն բան վերջացավ:

70 Ես պատկերացնում եմ Նրան այնտեղ. Նա էր Եդեմի գառնուկը, Նրա առաջին նախապատկերը:

71 Երբ Աբելը հավատով ավելի գերացանց զոհ մատուցեց Աստծուն, քան Կայենը: Նա հավանաբար խաղողի որթը կապել էր գառան վզին, քարշ էր տվել մինչև քարը, դանակի փոխարեն քար էր վերցրել ձեռքին, փոքրիկ գլուխը հետ էր գցել և կտրել ու ջարդել էր նրան մինչև մեռնելը: Նրա բուրդը ողողվել էր իր իսկ արյունով: Նա թավալվում էր իր արյան մեջ: Դա խորհրդապատկեր էր:

72 Բայց այն օրը Գողգոթայի վրա Գառը այս երկրից չէր, այԼ դա Աստծո Գառնուկն էր, ով մեռնում էր, թաթախվելով Իր սեփական Արյան մեջ: Նրան աշխարհի կողմից ջարդեցին, մտրակեցին, ծեծեցին, երեսին թքեցին, հարվածեցին, ապտակեցին, ամեն բան արեցին, և Արյունը հոսում էր Իր մազերից:

73 Երբ Աբելի գառնուկը մեռավ, նա մեռնում էր խոսելով մի լեզվով, որն Աբելին անհասկանալի էր: Դա մկկոց էր:

74 Աստծո Գառնուկն էլ այն օրը Գողգոթայի վրա մեռնելիս, խոսեց մի լեզվով, որը ոչ ոք չհասկացավ: *«Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ. ինչո՞ւ Ինձ թողեցիր»:* Դա Աստծո Գառն էր, կոտրատված և մտրակված:

75 Նա այն Գառն էր, որն Աբելը ուներ իմ մտքում, երբ կնոջ խոստացված Սերմը տեսավ: Նա այն Գառն էր, որին Դանիելը տեսավ, որ սարից կտրվեց առանց ձեռքի: Մարգարեի մոտ Նա անիվի մեջի Անիվն էր: Այն ամենը, ինչ նրանք կանխատեսել էին այդ օրը Գողգոթայում կատարվեց: Այսպիսով մեծ իրադարձություն եղավ: Դա կոտրեց սատանայի ողնաշարը:

76 Առաջինը՝ մենք պետք է պարզենք, թե այդ օրը ինչ նշանակություն ուներ: Երկրորդը՝ պետք է տեսնենք, թե այդ օրը ինչ է արել մեզ համար, հիմա, ինչ արեց մեզ համար: Երորրդը՝ եկե՛ք տեսնենք, թե մենք ի՞նչ պետք է անենք այդ օրվա համար: Ի՞նչ պետք է անենք:

77 Նախևառաջ քննենք դա, որովհետև դա մեծ օր է, բոլոր օրերից մեծագույնը: Մեղքի գինը վճարված է: Սատանայի ուժը խափանված է:

78 Իսկ հիմա տեսնենք, թե մենք ինչ պետք է անենք դրա դիմաց: Հիմա, իր հերթին, երբ Հիսուսը մեռավ Գողգոթայում, այն օրը Գողգոթայի վրա, Նա ոչ միայն մեր մեղքերի գինը վճարեց, այլ նաև գինը վճարեց և ճանապարհ հարթեց, որպեսզի մենք կարողանանք հետևել Նրան. որովհետև մենք, որպես ընկած Ադամ ենք, ով փրկագնվեց: Ինչպես Հոգին

առաջնորդվում էր Ադամին (առաջին Ադամին) Հոգով, ում վերահսկողության տակ էր ողջ բնությունը, այնպես էլ մենք (երկրորդ Ադամը) կամ երկրի մարդիկ Քրիստոսով փրկագնվեցինք, Գողգոթայի այդ օրվանից, որպեսզի կարողանանք հետևել Նրան: Հիմա, մահանալով Գողգոթայի վրա՝ Հիսուսը ճանապարհ հարթեց: Նա Հոգին՝ Սուրբ Հոգին ավանդեց, որը հետ ուղարկվեց երկիր ինձ ու քեզ համար, որպեսզի ապրենք Նրանով: Ահա թե ինչ է Գողգոթան նշանակում մեզ համար՝ հետևել Նրան:

79 Նախ քննենք սա, որ տեսնենք, թե ինչ արեց դա մեզ համար: Եվ ինչ պետք է մենք հիմա անենք դրա հետ կապված: Ի՞նչ պետք է ես և դու անենք:

80 Հիմա, մենք ասում ենք. «Դե, ես, ես գնահատում եմ դա: Դա շատ լավ է»: Բայց մենք պետք է ընդունենք դա: Իսկ դա ընդունելը նշանակում է ընդունել Նրա Անձը՝ Քրիստոսին, մեր սրտի մեջ:

81 Այդժամ մենք ազատ ենք մեղքից, դրա համար ոչ մի մեղքի կապանքներ այլևս կախված չեն մեր վրա: Աստված...կարծես երբեք էլ մեղանչաց չլինենք, կատարյալ Ձոհը մեզ դարձրել է կատարյալ: Որովհետև Հիսուսն ասաց. *«Ուրեմն կատարյալ եղեք, ինչպես կատարյալ է ձեր Հայրը, որ երկնքում է»:* Ուրեմն, ավելին անելու կարիք չկա, քանի որ մենք կատարյալ ենք դարձել Աստծո Ներկայության մեջ:

82 Հիմա, ահա թե որտեղ ենք մենք մեր դիրքը կորցնում: Եթե զգոն չլինենք, հետ կնայենք, թե ինչպիսին ենք մենք եղել: Եվ քանի դեռ մենք հետ ենք նայում, թե ինչպիսին ենք եղել, Ձոհը ոչինչ չի նշանակում մեզ համար: Ո՛հ, եկեղեցի՛, մի՞թե չես կարողանում դա տեսնել: Ես չ...Ես այդ գործը չէի էլ փորձի: Ես չեմ կարող, ոչ էլ դուք եք կարող: Փորձելու կարիք չկա: Քանի դեռ դուք հետ եք նայում այն բանին, ինչ արել եք կորսված եք: Բայց մի՛ նայեք դրան:

83 Նայե՛ք, թե այդ օրը Գողգոթայի վրա ինչ արեց ձեզ համար: Այն ձեր գինը վճարել է: Դա հարցը լուծել է: *«Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմրի պես լինեն, ձյան պես սպիտակ պիտի լինեն. եթե որդան կարմրի պես լինեն, ասրի պես սպիտակ պիտի դառնան»:* Ուրեմն դուք ոչ մի մեղք չունեք: Դուք կատարելապես անմեղ եք: Կարևոր չէ, թե ինչ եք արել, կամ ինչ եք անում, դուք միևնույն է անմեղ եք: Քանի դեռ դուք ընդունում եք Հիսուս Քրիստոսին

որպես ձեր Փրկիչ, ձեր մեղքերը ներված են: Այն, ինչ *ներված է,* «թողնված և մոռացված է»:

84 Հետո ի՞նչ է անում: Այդ պայմանից հետո քեզ տրվում է Իր Հոգին՝ Նրան հետևելու և անելու այն, ինչ Ինքն արեց ուրիշների համար, ովքեր նույնպես հետևում են: Նա ընդամենը մեկ Մարդ էր՝ կատարյալ Մարդ: Նա Իր կյանքը տվեց և քեզ համար օրինակ դարձավ: Հիմա մենք ի՞նչ պետք է անենք:

85 Հիմա, առաջին բանը, որ ուզում եմ ասել, սա է՝ Հիսուսը երբեք չապրեց Իր համար: Նրա Իր կյանքն ապրել է ուրիշների համար: Դա կատարելապես, հավիտենական կյանք է: Երբ դուք ասում եք, որ եկեղեցի եք գնում և բարի գործեր եք անում, դա լավ է: Բայց երբ դուք ձեր կյանքը ապրում եք ձեր համար, հավիտենական կյանք չունեք: Հավիտենական կյանքը ուրիշների համար ապրելն է: Նա ապացուցեց դա, երբ եկավ Աստծո Գառան մեջ: Նա ապրեց և հավիտենական կյանք ունեցավ, որովհետև ապրեց ոչ թե Իր, այլ ուրիշների համար: Դուք էլ այդ օրը ընդունելով հավիտենական կյանք եք ստանում, և ապրում եք այլևս ոչ թե ձեր, այլ՝ ուրիշների համար:

86 Ինչ–որ մեկն ասաց. «Ինչպե՞ս կարող եք հանդուրժել, թույլ տալ, որ որևէ մեկը ձեզ նման վատ անուններով կոչի»: Դու քո համար չես ապրում, այլ՝ ուրիշների, որպեսզի կարողանաս փրկագնել այդ մարդուն: Դուք դառնում եք որդիներ: Դժբախտությունն այն է, որ եկեղեցին մոռացել է, որ նրանք որդիներ են: Դուք որդի եք: Դուք զբաղեցնում եք Քրիստոսի տեղը: Դուք որդի եք, ուստի ապրեք ոչ թե ձեզ, այլ՝ ուրիշների համար:

87 «Դե, Բրանհամ եղբայր, ես կարող եմ ապրել *այս* եղբոր համար, որովհետև, նա լավ մարդ է»: Դա այն չէ:

88 Արպեք այն մարդու համար, ով ատում է ձեզ: Ապրեք այն մարդու համար, ով հնարավորության դեպքում կսպաներ ձեզ: Ահա թե ինչ արեցին նրանք Նրա հետ: Նրանց սպանեցին Նրան, և Նա մեռավ, որպեսզի կարողանա փրկել նրանց: Դա է հավիտենական կյանքը: Երբ դու…դա քո գրկում է, այդ ժամանակ ես դու դեմքով ուղղված երկնքին: Բայց դու զոհաբերում ես քո սեփական բաները, դադարեցնում ես դրանք, ինչպես ոչխարն է տալիս իր բուրդը: Դու հայացքդ ուղղում ես դեպի Գողգոթա:

89 Հուսով են, որ սա կոգնի ձեզ հասնել այդ վիճակին:

Ահա թե ինչ է խորանը, դա այն է, ինչ բոլոր մարդիկ պիտի անեն, պարզել, թե ով եք դուք և որն է ձեր նպատակը: Եկեղեցի, եկեղեցի գնալը պարզապես երաժշտություն նվագելը և երգեր երգելը չէ: Եկեղեցին ուղղիչ վայր է: «Դատաստանը սկսվում է Աստծո տնից»:

90 «Մենք պետք է մեր անձերը մեռած համարենք, բայց կենդանի՝ Քրիստոսի համար»: Այսպիսով, Նա ճանապարհ հարթեց, որպեսզի մենք կարոանանք զոհաբերել մեզ Իր ծառայության համար, որպեսզի հետևենք Նրան: Եթե մենք հետևում ենք Նրան, ուրեմն ապրում ենք այն կյանքով, որ Նա ապրեց: Դա հրաշալի է:

91 Հիսուսն ասաց և խոսեց դրա մասին: Թույլ տվեք մի քանի մեջբերումներ անեմ դրա վերաբերյալ: Ուշադիր լսե՛ք: Բաց մի՛ թողեք սա: Հիսուսն ասաց, որ այն Օրը Նա կբաժանի մարդկանց, ինչպես ոչխարներին են բաժանում այծերից: Եվ Նա կասի այծերին. «Կանգնե՛ք ձախ կողմում», իսկ ոչխարներին. «Կանգնե՛ք աջ կողմում»:

92 Եվ Նա կասի այծերին. «Հեռացե՛ք Ինձանից: Որովհետև սոված էի, և չկերակրեցիք, բանտում էի, և Ինձ չայցելեցիք, մերկ էի, և Ինձ չհագցրիք, Ծարավ էի, և ջուր չտվեցիք: Հիվանդ էի և Ինձ չայցելեցիք: Դրա համար հեռացե՛ք Ինձնից»:

93 Իսկ ոչխարներին կասի. «Սոված էի, և Ինձ ուտելիք տվիք, մերկ էի, և հագցրիք Ինձ, հիվանդ էի, և Ինձ ծառայություն արեցիք»:

94 Այժմ ուշադրությո՛ւն դարձրեք: Բաց մի՛ թող սա, եկեղեցի՛: Պահե՛ք սա հավիտյան ձեր սրտում: Դա այնքան անգիտակցաբար գործվեց: Մարդիկ դա որպես պարտականություն կատարելը չեն անում: Մի մարդ, որ քեզ ինչ–որ բան է տալիս, որովհետև պետք է դա անի, մի մարդ, որ կերակրում է ձեզ, որովհետև պետք է դա անի, ուրեմն եսասիրական գաղափար ունի: Դա պետք է լինի հենց ձեր ապրելակերպը, ձեր գործողությունը:

95 Դա այդքան զարմացրեց այդ ոչխարներին, որ ասացին. «Տե՛ր, ե՞րբ ես Դու սոված եղել և չենք կերակրել...Ե՞րբ ես Դու սոված եղել, և Քեզ ուտելիք ենք տվել: Ե՞րբ ես Դու մերկ եղել, և հագցրել ենք Քեզ: Ե՞րբ ես Դու ծարավ եղել, և ջուր ենք տվել Քեզ: Ե՞րբ ես Դու հիվանդացել, և մենք ծառայություն ենք արել Քեզ»:

96 Դա այնքան ինքնաբերաբար սիրուց բխող էր, պարզապես Քո կյանքը ապրում էր նրանց մեջ: Ո՛վ

Աստված, թույլ տուր մարդկանց տեսնել, թե ինչ է Գողգոթան արել մեզ համար: Այսպես ինքնաբերաբար.

«Որտե՞ղ էիր Դու, Տե՛ր: Մենք երբեք չենք իմացել դա»:

97 Տեսե՛ք, թե Հիսուսը դարձավ և ինչ ասաց. *«Ինչ որ սրանց արեցիք՝ Ինձ արեցիք»:*

98 Անշահախնդիր կյանք, ոչ թե ետին միտք: Ոչ թե մտածելով այդ մասին, այլ դուք այնքան մեռած եք աշխարհիկ բաների համար, և այնքան կենդանի Քրստոսի մեջ, և այնքան եք քայլում մայրուղու վրա, որ այս բաները պարզապես ինքնաբերաբար մի բան են: Դու պարզապես անում ես դա: Չես ասում. «Դե, հիմա, Տե՛րը, Տե՛րն ուզում է, որ ես անեմ դա»: Դա այն չէ: Դու պարզապես Նրա մասնիկն ես: Նրա Հոգին քո մեջ է, և դու գործում ես այնպես, ինչպես Նա է գործել: Ահ: Հասկացեք դա:

99 «Ճանապարհ կա, որ մարդուն շիտակ է թվում, բայց դրա վերջում մահվան ճանապարհն է»:

100 *«Ոչ թե ամեն ոք, որ Ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, պիտի մտնի երկնքի թագավորությունը, այլ նրանք, ովքեր կատարում են Իմ Հոր կամքը»,* սրտանց, հոժարակամ:

101 Հիմա, այդ օրը Գողգոթայի վրա այդ գինը վճարվեց, որպեսզի մենք կարողանանք լինել այդպիսին:

102 Մի՛ ասեք. «Գիտե՞ս, Ջոնի այրին մի անգամ...Նա ածուխ չուներ, և ես գնացի ածուխ գնեցի նրա համար: Ասում եմ ձեզ, տեսա մի եղբոր, ով կոստյումի կարիք ուներ, և ես գնացի և կոստյում գնեցի նրա համար: Օրհնյա՜լ լինի Աստված: Ես քրիստոնյա եմ»: Ո՛հ, Աստված իմ: Դու եսասեր, խեղճ ու թշվառ մարդ ես: Դու կեղծավոր ես:

103 «Թող աջ ձեռքդ չիմանա, թե ձախն ինչ է անում, և ձախ ձեռքդ չիմանա, թե աջն ինչ է անում»: Պարզապես այնքան ինքնաբերաբար մեռած ես Քրիստոսի մեջ, որ դու ամեն դեպքում անում ես դա: Դա ձեր բնույթն է: Դա ձեր բնավորություն է: Ինչ էլ որ լինի, դուք անում եք դա: Դա պարզապես կյանք է, որ ապրում է ձեզանում: Դուք ամբողջությամբ կապված եք այդ Հոգու հետ, և Այն Ինքն է ապրում ձեր մեջ: Ո՛հ, զգում եք այդ օրհնյալ Հոգին, այդ Կյանքը: «Ո՛չ թե ես եմ ապրում,— ասում է Պողոսը,— այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ», պարզապես այսպես ինքնաբերաբար:

104 «Դե, ասում եմ ձեզ, եղբայր Բրանհամ, մենք քրիստոնյաներ ենք այստեղ: Մենք *այս* մարդկանց,

այն մարդկանց ենք օգնում»: Ո՛հ, Աստված իմ: Ամո՛թ ձեզ: Դա քրիստոնեություն չէ:

105 Քրիստոնեությունը պարզապես ինքնաբերաբար հասնում է դրան, դա պետք է արվի: Եվ դուք պարզապես մոռանում եք դրա մասին, ամեն ինչի մասին. «Ես այդպիսին եմ»: Գնա և արա դա:

106 Քրիստոսը ամբողջությամբ հանձնեց Իր կյանքը Աստծուն: Նա Իրեն որպես հասարակական ծառա տվեց մարդկությանը: Նա Իր կյանքը ձրիաբար շնորհեց: Նա դա անելու կարիք չուներ: Նա Իր կյանքը չխնայեց: Նա չասաց. «Եվ այսպես, եղբայրնե՛ր, դուք պետք է Ինձ հարգեք, որովհետև Ես եկա՝ ձեզ համար մեռնելու»: Նա մի բառ անգամ չասաց դրա մասին: Ամեն դեպքում Նա մեռավ, որովհետև Աստված էր Նրանում:

107 Աստված է քո մեջ, Աստված է իմ մեջ, որ մղում է հոգ տանել ուրիշների մասին: Ոչխարնե՛ր, մի կողմ:

108 Ոմանք կասեն. «Տե՛ր, ես *այս* եմ արել, *այն* եմ արել»:

109 Նա ասաց. *«Ինձանից հեռացե՛ք, ով անօրենություն գործողներ. ձեզ երբեք չեմ ճանաչել»:*

110 Եթե եկեղեցին կարողանար երբևէ գալ այդ հիմնարար փաստերին, որ դա ինչ-որ բան չէ, որ դուք փորձում եք անել, ստիպում եք ձեզ անել դա: Դա ինչ-որ մի բան է, որ ծնվել է ձեզանում:

111 Ներեցե՛ք ինձ, հոգեգալստական իմ եղբայրներ: Ես էլ եմ հոգեգալստական: Բայց իմ հեգեգալստական ընկերները հասել են նրան, որտեղ պետք է արագ, շատ երաժշտություն լինի, հարվածային գործիքներ կամ ծափեր ձեռքերով, կամ թմբուկներ աղաղակ բարձրացնելու համար: Դրանք միայն էմոցիաներ են: Նախքան պատերազմի գնալը փողեր էին հնչեցնում: Դա բարձացնում էր մարտական ոգին: Ես դեմ չեմ երաժշտությանը: Ես դեմ չեմ ծափ զարկելուն: Ես կողմ եմ այս բաներին: Դա կատարելապես ճիշտ է: Դա պետք է:

112 Բայց դուք մեծ բաները թողել եք անավարտ, դա այն ինքնազոհ կյանքն է, որ Աստված է ձեր մեջ ապրում, ինքնաբերաբար անելով այն, ինչ ճիշտ է, որովհետև դա ճիշտ է: Պարզապես ապրում ես դրանով, նույնիսկ չես մտածում դրա մասին: Պարզապես ապրում ես դրանով: Հետո հետևեք, տեսեք, թե ինչ է կատարվում: Դուք պարզապես...չեք...Դուք մայրուղու վրա եք: Ահա թե ինչ

էր Գողգոթան նշանակում ձեզ համար, ճանապարհի վրա եք, այդ օրը դա բացվեց ձեզ համար։

113 Հիմա հիշեք, դուք չեք կարող կիսով չափ այծ և կիսով չափ ոչխար լինել։ Դրանք չեն խառնվում։

114 Հիմա, շատ մարդիկ կան, ովքեր ասում են. «Այո, բայց գիտե՞ք ինչ։ Մենք մեր խմբում կազմակերպություն ունենք։ Մենք, մենք օգնում ենք աղքատներին։ Մենք *այս* բանն ենք անում»։ Դա լավ է, բայց դուք ձեր առջև շեփոր եք հնչեցրում։ Այդպես չպետք է անեք։

115 «Ողորմությունդ ծածուկ արա»,— Հիսուսն ասաց։ Պարզապես ինքնաբերաբար արվող ինչ-որ բան է քեզ համար, ծարավ ժամանակ գնալ և ջուր բերելու նման է։ Դու ծարավ ես։ Եթե հարևանդ ծարավ է, դու նրա մասին էլ ես մտածում։ Կողքինիդ կարիքը, դու մտածում ես նրա մասին այնպես, ինչպես կմտածեիր քո կարիքի մասին։ Եվ դու ոչ մի ուշադրություն չես դարձրում դրան։ Պարզապես շարունակում ես այսպես ապրել։

Հիմա, դու չես կարող լինել կիսով չափ ոչխար և կիսով չափ այծ։

116 Դրա համար եթե դու ասում ես. «Դե, մեր եկեղեցին կազմակերպություն ունի։ Մենք օգնում ենք աղքատներին, *այս* ենք անում, *այն* ենք անում և *մյուսն* ենք անում»։

117 Եթե դուք դա ունեք առանց Քրիստոսի կյանքը ձեզանում ունենալու, ուրեմն բացարձակապես իզուր եք անում։ Հիսուսը...Պողոսն ասում է Ա Կորնթացիս 13-րդ գլխում. «Եթե իմ բոլոր ապրանքներն աղքատներին ուտեցնեմ ու իմ մարմինը այրեմ որպես զոհ, ոչ մի օգուտ չեմ ունենա»։

118 Հիմա, սա դժվար է, բայց Ճշմարտություն է։ Դուք պետք է գաք այդ փաստին, հասկանաք, թե Գողգոթան ինչ է արել ձեզ համար։ Բայց մենք նայում ենք դրան և ասում ենք. «Ո՛հ, այո՛, դա հրաշալի է»։ Դա այն չէ։ Եթե Աստծո Որդին պիտի գնար Գողգոթա՝ խաչվելու համար, ուրեմն ամեն որդի, որ գալիս է, պետք է գնա Գողգոթա։ Նա էլ պետք է վերապրի Գողգոթան։ Դուք էլ պետք է վերապրեք Գողգոթայի այդ օրը։ Ես էլ պետք է վերապրեմ այն։ Դա լուծում է մեղքի հարցը։ Ոչ թե քարոզիչի հետ ձեռք սեղմումով, ոչ թե եկեղեցում ցնցվելով, ոչ թե փաստաթղթով ներս մտնելով, ոչ թե դավանությամբ։ Այլ ներս մտնել Ծնունդով։ Նա երբեք փաստաթուղթ չվեց։

Նա երբեք դավանություն չտվեց: Նա Ծնունդ չտվեց: Ահա թե ինչպես ենք մտնում: Հետո դրանից սկսած՝ մենք ինքնաբերաբար ապրում ենք քրիստոնեական կյանքով:

119 Հիմա, ևս մեկ նշում: Կիսով չափ այծ, կիսով չափ ոչխար, այդպես չի լինում: Դուք կամ այծ եք կամ ոչխար: Դուք չես կարող կիսով չափ այծ և կիսով չափ ոչխար լինել: Դուք կամ այծ եք, կամ ոչխար:

120 Հիմա, եթե դուք միայն բարի գործեր եք անում, և կարծում եք, որ դրանով երկինք ենք մտնելու, այդ դեպքում Գողգոթայի այդ օրվա կարիքը չէր լինի: Օրենքը նախատեսում էր դա: Բայց քանի որ Գողգոթայի օրը պետք էր, դա պետք է բերեր նրան, որ մենք չենք կարող լինել պարզապես եկեղեցու անդամներ, այլ Աստծո որդիներ և դուստրեր: Ահա թե Գողգոթայի օրն ինչ էր: Ահա թե դա ինչ է դա նշանակում ձեզ համար, որպեսզի դուք կարողանաք անել, հետևել և գործել Հիսուսի նման:

121 Հիմա, գետը չի հոսում միաժամանակ վերև և ներքև: Այն միայն մի ուղությամբ է ընթանում: Աստծո Հոգին էլ մի ուղությամբ է ընթանում: Նա ոչ մի բանի հետ չի խառնվում: Հոսում է նույն ուղությամբ:

122 Ավարտելով, նայե՛ք Հիսուսին: Հիսուսն ասաց. *«Այս գործերը, որ Ես անում եմ՝ դուք էլ կանեք, և դրանցից ավելի մեծ գործեր կանեք, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում»:*

123 Ես այսքանը այստեղի եկեղեցու համար չեմ ասում: Դուք հասկանում եք: Բայց այս պատգամները ձայնագրվում են, և տասնյակ հազավորներն ամբողջ աշխարհով մեկ լսում են դրանք:

124 Քննադատի համար ես հենց հիմա պատրաստվում եմ պատասխանել այդ հարցին: Ինձ հաճախ են ասում... ասում: Ասում են. «Դե, դուք հավատո՞ւմ եք Սուրբ Գրքին: Հիսուսն ասաց. *«Այս գործերը, որ Ես անում եմ՝ դուք էլ կանեք, և դրանցից ավելի մեծ գործեր կանեք, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում»:*

125 Որքա՞ն կարող եք արատավորվել, պարոն: Ինչքա՞ն կարող եք շեղվել զանազանումից ձեր ինտելեկտուալ աստվածաբանություններով, ձեր ունեցած մտավոր գաղափարներով: Իմ սիրելի և կորսված բարեկամ, մի՞թե չեք կարող հասկանալ, որ այս Սուրբ Գիրքը հորգևորապես է մեկնաբանվում:

126 Հիսուսը գոհություն հայտնեց Հորը, որ Նա ծածկել էր դա կրթվածներից, խորաթափանցներից, իմաստուններից ու գիտուններից և հայտնել էր մանուկներին, ովքեր կգան Գողգոթա:

127 Հիմա նայե՛ք: Հիսուսն ասաց. Տեսե՛ք, թե Նա ինչպես արտահայտեց դա: «Այն գործերը, որ Ես անում եմ», Նա հենց հիմա անում է դրանք: «Այն գործերը, որ Ես անում եմ հիմա՝ հիվանդների բժշկությունը, մեռելների հարությունը, կույրերի աչքերի բացելը, դուք էլ կանեք: Դուք էլ կանեք սրանք, եթե հավատաք Ինձ: Դուք կանեք այս գործերը: Իսկ հետո դրանցից ավելի մեծ գործեր կանեք, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում»:

128 *«Մի քիչ ժամանակ էլ, և աշխարհն այլևս Ինձ չի տեսնի, բայց դուք կտեսնեք, որովհետև ձեզ հետ և ձեր մեջ կլինեմ մինչև աշխարհի վերջը: Ես ձեզ որբ չեմ թողնի: Ես Հորը կաղաչեմ, և Նա ձեզ ուրիշ Մխիթարիչ կուղարկի, որը Սուրբ Հոգին է, ում աշխարհը չի կարող ընդունել, բայց դուք կարող եք ընդունել»:*

129 Հիմա ուշադրությո՛ւն դարձրեք: «Ավելի մեծ» գործերը Եկեղեցում զորություն ունենալն էր, ոչ միայն աղոթքով հիվանդներին բժշկելու, դևերին հանելու, այլև հավատացյալների հետ հավիտենական կյանքը բաժնեկցելու: Սուրբ Հոգին եկավ և դրվեց Եկեղեցու ձեռքերի մեջ՝ կյանք բաժնեկցելու համար: Ո՛հ: Ահա թե ինչ էր Գողգոթան նշանակում: Այն ընկած, բարոյալքված տղամարդկանց և կանանց բարձրացրեց Աստծո որդիներ և դուստրեր լինելու համար, որպեսզի բժշկեն հիվանդներին և հաղորդ դարձնեն հավիտենական կյանքին հնազանդ հավատացյալներին Սուրբ Հոգին շնորհելու միջոցով, մարդկիկ, ովքեր մի ժամանակ անհավատ էին, հավատացյալ դարձան և հաղորդ եղան հոգևոր, հավիտենական կյանքին:

130 Որքա՜ն մեծ բան է ասել. «Այս հիվանդ կինը, ով պառկած է այստեղ, որ ես կարող եմ հավատքով աղոթել և նա կբժշկվի»: Դա մեծ բան է, ահա թե ինչ էր Նա անում այդ ժամանակ: «Բայց,— ասաց,— դրանցից էլ ավելի մեծ գործեր կանեք. Ես ձեզ իշխանություն կտամ, ոչ միայն որոշ ժամանակով բարձրացնելու նրան, այլ հավիտենական կյանք տալ, որը մշտնջենական, հավիտենական կլինի»:

131 Խեղճ, կույր և թշվառ մարդիկ, ինչպե՞ս կարող եք բաց թողնել դա: Մի՞թե չեք տեսնում, թե «ավելի մեծ» գործն ինչ

է: Դա ամենամեծ գործն է, որ երբևէ կարող էր լինել, այն է՝ բաժնեկցել հավիտենական կյանքը մարդկանց հետ: Ի՞նչ է հավիտենական կյանքը: Այն կյանքը, որ Նա ապրեց, այն կյանքը որ Նրա մեջ էր, բաժնեկցել ուրիշների հետ: Մարդը կարո՞ղ է դա անել: Աստծո Որդին կարող է:

132 Հիսուսն ասաց. *«Ում մեղքերը դուք ներեք՝ ներված կլինեն նրանց, և ում մեղքերը դուք պահեք, կպահվեն»:*

133 Ահա թե որտեղ կաթոլիկ եկեղեցին և շատ ուրիշներ իրենց մեծ սխալը գործեցին: Նրանք դուրս են գալիս և ասում են. «Ես ներում եմ քո մեղքերը»: Դա այն չէր:

134 Աստվածաշնչում ինչպե՞ս էին մեղքերը ներվում: Պենտեկոստեի օրը Պետրոսը պատասխանեց այդ հարցին: Նրանք ասացին. «Ի՞նչ անենք, որ փրկվենք»: Ինչպե՞ս կարող ենք ստանալ այն, ինչ դուք բոլորդ ունեք»: Նա դուրս գրեց դեղատոմսը: Ասաց, թե ինչ անել:

135 Նա ասաց. «Ապաշխարեցե՛ք, և ձեզանից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի Անունով»: Ինչի՞ համար: Մեղքերի թողության համար: Ահա «ավելի մեծ» գործերը:

136 Քարոզիչներից քանի՞սն այս առավոտ, քանի՞սը, մագնիսական ժապավենի վրա իմ Խոսքը լսողներից կամենում են գնալ Գողգոթա այս առավոտ: Եվ տեսնել, թե Աստված ինչ է արել ձեզ համար այնտեղ, և հրաժարվել ձեր հարանվանական հավատամքներից և քարոզել Ավետարանը: Ալելո՛ւիա: Այն հիմա ձեր ձեռքերում է: Ի՞նչ եք անելու Դրա հետ:

137 «Որովհետև ապաշխարությունը և մեղքերի թողությունը Նրա Անունով պետք է քարոզվի ամբողջ աշխարհին՝ Երուսաղեմից սկսած»: Ալելո՛ւիա: Փա՛ռք: Ահա՛ խնդրեմ:

138 Ի՞նչ է Գողգոթան նշանակում քեզ համար: Ի՞նչ է արեց այդ օրը քեզ հետ: Արդյոք այդ քեզ ինչ-որ աստվածաբանությամբ ցնցե՞ց: Արդյոք այն քեզ մեծամիտ դարձրե՞ց: Թե՞ այն քեզ դարձրեց քրիստոնյա: Ալելո՛ւիա:

139 Մեղք, թողություն: «Դրանից ավելի մեծ գործեր կանեք»: Տեսնում եք, թե «դու»-երը ովքեր են, այնպես չէ՞: «Դրանից ավելի մեծ գործեր», մեղքերի թողություն Հիսուս Քրիստոսի Անունով:

140 Բայց հավատամքների, հարանվանությունների և այլնի միջոցով, դուք կապվում եք որոշակի տեղի հետ, որտեղ դեռևս ծառայում եք աշխարհին: Ցույց տվեք մի

մարդ կամ կին, ով կարող է գալ Գողգոթա և փորձել ինչ-որ մեծ մեկը դառնալ, որովհետև ինչ-որ մեկը ինչ-որ բան է ասել: Ասեք ինձ, թե որտեղից կարող եք նայել Գողգոթայի երեսին, ուղիղ այդ լույսի մեջ, այդ օրը Գողգոթայում: Ինչպե՞ս կարող եք վերապրել Գողգոթան և դուրս գալ մեծամտացած: Ինչպե՞ս կարող եք դառնալ խաղատիկնիկ ինչ-որ կազմակերպության համար և քարոզել մարդկանց կողմից ստեղված ինչ-որ վարդապետություններ: Ինչո՞ւ դա չի խոնարհեցնում քեզ Աստծո Խոսքի առջև: Եթե երբևէ գնաս այնտեղ, խոնարհ դուրս կգաս: Ինչպե՞ս կարող եք ցանկանալ ինչ-որ մեծ մեկը դառնալ ձեր կազմակերպության մեջ, փետուրը ձեր գլխարկին, երբ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, խոնարհեցրեց Իրեն, Նրա մարմինը մտրակեցին, երեսին թքեցին, մինչև ամոթ և անարգանք: Նրանք հանեցին Նրա հագուստները և աշխարհի առաջ գամեցին խաչին: «Արհամարելով ամոթը»: Ինչպե՞ս կարող եք գնալ Գողգոթա և հեռանալ այլ բանով, քան Նա էր՝ խայտառակություն, ամոթ:

«Ո՛հ,— կասեք դուք,— նրանք ինձ կվոնդեն»: Թող վոնդեն:

141 Վերապրեք ձեր Գողգոթան և Աստված Իր ձևով ձեզ հետ կվարվի: Թույլ տվեք դա նորից մեջբերեմ: Վերապրեք ձեր Գողգոթան, և Աստված Իր ձևով ձեզ հետ կվարվի:

Աղոթենք:

142 Տե՛ր, ո՛վ Աստված, տար հենց հիմա մեզ բոլորիս Գողգոթա: Թող ազատվենք մեր եսից, Տե՛ր, մարդկանցից երկյուղելուց, այն վախից, թե ինչ-որ մեկն ինչ է ասելու: Չէ որ ողջ աշխարհը ծիծաղում և ծաղրում էր Նրան: Բայց Նա հնազանդ եղավ մինչև մահ: Նա հնազանդ եղավ մինչև խայտառակություն: Նա հնազանդ էր նույնիսկ ֆեդերալ կառավարության առջև:

143 Եվ մենք գիտակցում ենք, որ երբ սատանան զարկեց այս երկիրը, նա՛ դարձավ այս աշխարհի կառավարիչն ու իշխանը: Նա նույն բանը հայտարարեց մեր Տիրոջ առջև և ասաց. «Այս թագավորություններն իմն են: Ես ինչ ուզենամ, կանեմ դրանց հետ»: Եվ այդ օրվանից առ այսօր մենք գիտակցում ենք դա, որ այս աշխարհը անեծքի տակ է, այն կառավարվում է այն անիծողի կողմից:

Բայց, Աստվա՛ծ, ո՛հ Աստված իմ, մենք ծառայում ենք մի թագավորությանը, որն անիծված չէ:

144 Հա՛յր Աստված, որքան հրաշալի է այն, որ Դու որոշ մեծ գործեր ես արել այսօրվա աշխարհի կինեմատոգրաֆիայում: Թույլ տալով, որ թողարկեն այնպիսի մեծ ֆիլմեր, ինչպիսիք են *«Տասը պատվիրանները»* և այլն, որ տղամարդիկ և կանայք, ովքեր եկեղեցու շեմն էլ չեն հատի, տեսնեն, թե ինչ է սա: Աստծո ճանապարհը մերժված ճանապարհ է աշխարհի կողմից: Որովհետև մենք նման ենք...Մենք կարծես գնում ենք Ռուսաստան՝ կոմունիզմի ներքո:

145 Մենք այս աշխարհում ենք, բայց այս աշխարհից չենք: Մենք գնացել ենք Գողգոթա: Մենք խաչել ենք մեր անձերը Աստծո թագավորության համար, որպեսզի Նրանից մեկը դառնանք: Կարևոր չէ, թե աշխարհն ինչ է ասում, մենք ճանապարհ կգնանք արհամարհվածների փոքր խմբի հետ, որոնք Տիրոջն են պատկանում: Մենք գնում ենք դեպի հարության, և հավատում ենք, որ դա մոտ է, Տե՛ր, երբ հարություն կառնենք մի Թագավորության մեջ, որը կտիրի այս աշխարհին: Ինչպես Դանիելը կանխատեսեց դա, և այն ջաղջախեց աշխարհը և դարձրեց ինչպես մղեղ, և ամառվա կալի հարդափոշու պես քամին տարավ այն: Բայց սարը, Քարը մեծացավ և վերածվեց մեծ սարի, որ էլ ծածկեց երկիրը: Այդ Քարը կգա: Օ՜, Աստված, մենք ուզում ենք դրա մասնիկը դառնալ: Թող մերժենք մեր անձերը, վերցնենք մեր ամենօրվա խաչը, ապրենք Քրիստոսի համար, ապրենք ուրիշների համար: Շնորհի՛ր դա, Տե՛ր:

146 Կա՞ այս առավոտ մեկը, ով չի ճանաչում Նրան որպես Փրկիչ, և կուզենար, որ հիշենք նրան վերջին աղոթքի մեջ, և կցանկանար, որ դա լիներ իր օրը Գողգոթայում, չե՞ք ուզում բարձրացնել ձեր ձեռքերը և ասել. «Բրանհամ եղբայր, աղոթեք ինձ համար: Ես ուզում եմ ճանաչել Նրան որպես իմ Փրկչի»: Աստված օրհնի ձեզ, երիտասարդ: Էլի՞ որևէ մեկը: Աստված օրհնի ձեզ, եղբայր, այնտեղ՝ խորքում:

147 Կա՞ էլի մեկը: Ասեք. «Ես ուզում եմ ճանաչել Նրան: Ես ուզում եմ, որ ինձ համար սա լինի Գողգոթայի օր: Ես զզվել և հոգնել եմ: Ի՞նչ օգուտ ինձ զբաղվել այստեղ անարժեք բաներով, փոխարենն այն բանի, որ ծնված եմ անելու: Ես ծնվել, ծնվել եմ Աստծո որդի լինելու համար, իսկ այստեղ ես կառչած եմ աշխարհիկ բաներից: Ո՛վ Աստված, թույլ տուր ինձ խաչվել այսօր: Թույլ տուր ինձ այսօր խաչվել իմ և իմ գաղափարների

համար, որ կարողանամ ապրել Քրիստոսի հետ, և ապրել ուրիշների համար: Կարևոր չէ, թե ինչ կանեն ինձ հետ՝ ծաղրուծանակի կենթարկեն, կհալածեն, չար բաներ կասեն իմ դեմ և այլն, թույլ տուր խոնարհությամբ քայլեմ, և գառնուկի պես հեզ լինեմ, ինչպես որ Նա արեց: Եվ մի օր՝ վերջին օրում, Նա խոստացել է ինձ նորից հարություն տալ: Ես անհամբեր սպասում եմ այդ Օրվան»: Կլինե՞ն էլի ձեռք բարձրացնողներ: Աստված օրհնի ձեզ այնտեղ՝ հետևում, ձեզ էլ: Լավ: Կա՞ էլի պարզապես...Աստված օրհնի ձեզ: Աստված օրհնի ձեզ: Կա՞ էլի մեկը, աղոթելուց առաջ:

148 Մեր երկնայի՛ն Հայր, այն օրը, երբ Պենտեկոստեի օրը Պետրոսը քարոզեց, ասվեց. «Նրանք էլ, ովքեր հավատացին, միացան եկեղեցուն»: Նրանք իրոք հավատում էին իրենց ողջ սիրտով: Այս մարդիկ, ովքեր հենց նոր բարձրացրեցին իրենց ձեռքը, ես հավատում եմ, որ նրանք իրենց ողջ սրտով հավատացին: Եվ եթե հավատացել են, այստեղ լողավազան կա, որը սպասում է: Նրանք ուզում են, որ այդ մեղքերը ներվեն: Այստեղ կա մեկը, ով կարող է մկրտել նրանց այդ Անունով, միակ Անունը, որ մարդկանց տրված է երկնքի տակ, որով կարող կլինենք փրկվել:

149 Որովհետև ինչպես մի քանի րոպե առաջ մեջբերեցի Սուրբ Գրքից, որ. «Ապաշխարությունը և մեղքերի թողությունը Նրա Անունով պետք է քարոզվեն ամբողջ աշխարհին՝ Երուսաղեմից սկսած»: Եվ երբ Երուսաղեմում ապաշպարհությունը ու մեղքերի թողությունը քարոզվեց, աշակերտներն ասացին նրանց Սուրբ Գրքից, ասացին, որ նրանք պետք է «նախ ապաշխարեն, իսկ հետո մկրտվեն Հիսուս Քրիստոսի Անունով»: Դա քարոզիչի գործն էր, որ պիտի աներ: Որ նրանք ապաշխարին, իսկ ինքը մկրտեր նրանց մեղքերի թողության համար: *«Ում մեղքերը դուք ներեք՝ ներված կլինեն նրանց, և ում մեղքերը դուք պահեք, կպահվեն»:*

150 Հա՛յր, ինչպե՞ս կարող էր աշխարհը հասնել այս մակարդակին: Ինչո՞ւ չհավատալ հասարակ Ավետարանին: Եվ նրանք դրա փոխարեն նույնիսկ բերում են կեղծ անուններ, կեղծ մկրտություն, Սուրբ Հոգով կեղծ մկրտություն, ծառայողների հետ ձեռքսեղմում, օգտագործելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու տիտղոսները, ինչը երբեք Սուրբ Գրքում չի եղել, դա մի փաստաթուղթ է, որը հնարվել է հռոմեացիների կողմից, քրիստոնեական

ուսմունք չէ, Աստվածաշնչում ոչ մի տեղ նման բան չկա։ Մեղքերի թողությունը չի կարող լինել տիտղոսների միջոցով, այլ՝ Հիսուս Քրիստոսի Անունով է։

151 Հիմա, Հա՛յր, մենք գիտենք, որ սա այնքան էլ ժողովրդականություն չի վայելում։ Քո ճանապարները միշտ էլ այդպիսին են եղել։ Բայց թող տղամարդիկ և կանայք այսօր գան այդ օրվան՝ Գողգոթայի այդ օրվան, որտեղ Հիսուսը, արհամարհելով այդ օրը, այդ ամոթը, որ հանեն Իր հագուստները, մտրակեն, թքեն Իր երեսին, ծաղրուծանակի ենթարկեն ամբողջ աշխարհի, եկեղեցու, մարդկանց կողմից, ովքեր պիտի սիրեին Նրան։ Եվ չնայած այդ ամենին Նա Իր բերանը չբացեց, և գնաց ու մեռավ այդ մարդկանց համար, ովքեր ծաղրում էին Նրան։

152 Ո՛վ Աստված, տար մեզ այսօր Գողգոթա։ Եվ եթե նրանք ասեն, որ մենք խելագար ենք, ասում են, որ Սուրբ Գիրքը սխալ ենք հասկանում, ինչ էլ որ ուզենան ասել, ո՛վ Աստված, նրանք չեն կարող կանգնել Աստծո ներկայության մեջ և ասել, որ դա սխալ է։

Նրանք չեն կարող ծածկել իրենց մեղքերը Աստվածաշնչով։ Աստվածաշունչը մերկացնում է իրենց մեղքերը, անհավատությունը, հանրաճանաչ լինելը, մնացածների պես վարվելը։ Թող նրանք գան Գողգոթա այս առավոտ։

153 «Եվ Երուսաղեմից սկսած. որ ապաշխարությունը և մեղքերի թողությունը Նրա Անունով պետք է քարոզվի բոլոր ազգերի մեջ՝ Երուսաղմից սկսած»։

Թող նրանք էլ ընտրեն այդ նույն խաչվածության քայլը, որ կոտրվեն, որ թքեն իրենց երեսին և ծաղրեն նրանց, և կոչեն նրանց այն ամենով, ինչ կարելի է անվանել կրոնական ուրացողների շարքում՝ եկեղեցու մասնատողներ և մնացած ամենը, ինչպես որ ուզում են հոչակել։

Թող մենք այսօր, Տե՛ր, գնանք մեր ճանապարհը արհամարհվածների փոքր խմբի հետ, որոնք Տիրոջն են պատկանում։ Թող քայլենք այնպես, ինչպես առաքյաները քայլեցին, չթեքվենք ոչ աջ, ոչ էլ ձախ, և մեր սրտի բարությունից ծառայենք Աստծուն։ Շնորհի՛ր դա, Հա՛յր։

154 Բժշկիր հիվանդներին և տկարներին, ովքեր գալիս են աղոթքի շարքի մեջ։ Թող նրանք, ովքեր բարձրացնում են իրենց ձեռքերը հենց հիմա զղջան իրենց սրտերում։ Թող նրանք, ովքեր այնքան երկար ժամանակ հետաձգում

էին, արագ մոտենան ջրին և ստանան իրենց մեղքերի թողությունը Զոհի՝ Հիսուս Քրիստոսի, Աստծո Որդու Անվան հիման վրա: Ամեն:

Այնտեղ՝ խաչի վրա, որտեղ Փրկիչս մահացավ,
Ես մեղքերից մաքրվելու համար աղաղակեցի,
Այնտեղ իմ սրտի համար Արյունը կիրառվեց,
Փա՜ռք Նրա...

Փա՜ռք Նրա Անվան:
Ո՛հ, փա՜ռք Նրա Անվանը:
Ո՛հ, իմ սրտի համար Արյունը կիրառվեց,
Փա՜ռք Նրա Անվանը:

Ես այնքա՜ն հրաշալի ձևով փրկվեցի մեղքից (Ինչպե՞ս):
Հիսուսն այնքան անուշ ձևով բնակվում է իմ մեջ,
Այնտեղ՝ խաչի մոտ, որտեղ Նա...(եղիր Նրանից մեկը)...մեջ,
Ո՛հ, փա՜ռք Նրա Անվանը:

Փա՜ռք Նրա Անվանը:
Փա՜ռք Նրա Անվանը: (Թանկագի՜ն Անվանը):
Ո՛հ, այնտեղ...սրտիս համար Արյունը կիրառվեց,
Փա՜ռք Նրա...

155 Դա ինչ–որ բան չի՞ անում ձեզ հետ: Պարզապես մաքրեք ձեզ: Դա հույն է ներշնչում ձեզ, Կյանքը՝ Հավիտենական Կյանքը:

156 Ի՞նչ է նշանակում «Քրստոսի հետ խաչված լինել»: Այն է՝ ապրել ուրիշների համար: Ո՞ւմ համար: Նրանց համար, ովքեր ատում են ձեզ, ովքեր չես սիրում ձեզ, ովքեր ծաղրում են ձեզ. ապրե՛ք նրանց համար, եղե՛ք նրանց հետ, սիրե՛ք նրանց. «աղոթեք նրանց համար, ովքեր հակառակվում են ձեզ, ամեն տեսակի չար սուտ բաներ են ասում ձեզ Իմ Անվան համար: Նրանք հալածել են մարգարեներին, ովքեր ձեզանից առաջ են եղել»:

157 Ես մտածեցի, որ պատգամը հավանաբար կօգնի եկեղեցուն այս առավոտ, որ դուք տեսնեք, որ մենք Գողգոթայի, խաչելության կարիքն ունենք:

158 Հիմա այդ ամենն ի՞նչ է արել: Ամեն բան վճարեց: Քո՛ւյրը, որ նստած է անվասայլակի մեջ, դիմում եմ այստեղ եղող հիվանդներին և տկարներին, ամեն բան վճարված է, միակ բանը, որ պետք է անենք, հավատալն է, որ սա ձերն է. ընդունեք դա նույն ձևով և կբժշկվեք:

159 Հիշե՛ք. ի՞նչ է սա նշանակում հիմա: Դուք կարող եք գնալ աշխարհով մեկ քարոզել Ավետարանը, բժշկել հիվանդներին և բաժնեկցել հավիտենական կյանքը:

Որքան ավելի մեծ կլիներ դա. ահա մի տղամարդ պառկած է այստեղ ուռուցքով, քաղցկեղով, ինչ էլ որ լինի: (Մենք այնքան անգամներ տեսել ենք, որ Նա բաժնեկցում է Իր օրհնությունները և բժշկում է տղամարդկանց և կանաց. տաս հազարներով անվրիպելի դեպքեր են եղել ամբողջ աշխարհով մեկ, հասկանում եք, բարձրացրել է նրանց մահիճներից, պատգարակներից, քաղցկեղն այնպես էր կրծած եղել մարդկանց, որ նրանցից միայն ստվեր էր մնացել, իսկ այսօր նրանք հիանալի, առողջ վիճակում են): *«Դուք էլ կանեք Իմ արած գործերը: Էլ ավելի մեծ գործեր կանեք»,* «դրանից ավելի շատ», ճիշտ է:

Ի՞նչ: Ես երկարացրել եմ նրանց կյանքը Հիսուսի Անվան միջոցով, որպեսզի մի քանի օրով երկարացնեմ իրենց կյանքը:

Բայց «դրանից ավելի շատ գործեր կանեք, դուք հավիտենական կյանք կտաք նրանց Իմ Անունով»: Ո՜ւխ:

160 Ինչո՞ւ եք ամաչում այդ թանկագին Անունից: Ինչո՞ւ են մարդիկ խուսափում և հետ քաշվում նրանից: Դա սատանան է: Անկասկած:

161 «Ապաշխարությունը և մեղքերի թողությունը Նրա Անունով պետք է քարոզվի ամբողջ աշխարհին՝ Երուսաղեմից սկսած»: Ահա թե որտեղից ամենասկզբից Պատգամը դուրս եկավ: Ճի՞շտ է: «Ապաշխարությունը և մեղքերի թողությունը Նրա Անունով պետք է քարոզվի՝ Երուսաղեմից սկսած»:

162 Հիմա, նախ կանենք այնպես, ինչպես որ Նա արեց՝ կաղոթենք, որ հիվանդները բժշկվեն:

163 Հետո, մենք մեծ պարգև ունենք. այստեղ՝ հետևում ջուրը պատրաստ է ցանկացածի համար, ով ուզում է մկրտվել (այստեղ հագուստներ կան թե կանանց և թե տղամարդկանց համար) պատրաստած է ձեզ համար, որպեսզի ստանաք ձեր մեղքերի թողությունը. որովհետև

հիշեք, որ դուք կարող եք մեղքերի թողություն ստանալ միայն աստվածաշնչային վարդապետության համաձայն: *«Որովհետև մարդկանց տրված ուրիշ մի անուն չկա երկնքի տակ, որով կարող լինի փրկվել»:*

164 Պողոսը հանդիպեց մի քանիսին, ովքեր արդեն մկրտված էին: Նրանք աղաղակում էին, հաղթանակ ունեին: Նա ասաց. «Հապա ինչո՞վ մկրտվեցիք»:

Նրանք էլ ասացին. «Հովհաննեսի մկրտությամբ»:

Նա ասաց. «Հովհաննեսն ապաշխարության մկրտությամբ էր մկրտում»: Հիմա, հասկացե՛ք սա. նրանք մկրտված էին ապաշխարության մկրտությամբ, ոչ թե մեղքերի թողության համար: Քանի՞սն են դա հասկանում: Ոչ թե մեղքերի թողության համար: Անշուշտ, նրանք մկրտված էին, բայց ապաշխարության մկրտությամբ: Նրանք ապաշխարել էին. «Այո՛, պարո՛ն, ես ապաշխարել եմ: Ես հավատում եմ, որ Նրա գալիս է»: Նրանք մկրտված էին *ապաշխարության մկրտությամբ,* այսինքն՝ «հավատում էին Հիսուս Քրիստոսին»:

165 Հետո, երբ լսեցին *սա* (որ Զոհն արդեն եկել է), նորից մկրտվեցին Հիսուս Քրիստոսի Անունով: Այդ ժամանակ Սուրբ Հոգին եկավ նրանց վրա, երբ Պետրոսը դրեց իր ձեռքերը նրանց վրա, և նրանք լեզուներով էին խոսում և մարգարեանում:

166 Հիմա, ինչպե՞ս եք պատրաստվում սուրբգրային այդ համարը փոխել: Ցույց տվեք Աստվածաշնչում մի հատված, որտեղ Նոր Կտակարանում որևէ մեկի մեղքերը ներվել են, և նա մկրտված է եղել այլ կերպ, քան Հիսուս Քրիստոսի Անունով:

167 Ցույց տվե՛ք ինձ մի հատված Աստվածաշնչում, որտեղ որևէ մեկը մկրտվել է հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Կամ դրեք սեղանիս մի պատմություն՝ եկեղեցու պատմություն, որ ցույց է տալիս, որտեղ որևէ մեկը մկրտված է եղել Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անունով, մինչև վերջին առաքյալի մահը երեք հարյուր և այլն տարի հետո, երբ կաթոլիկ եկեղեցին կազմակերպվեց:

168 Հիմա, ես իմ գրասենյակում ունեմ *«Նախանիկյան հայրերը»* և...բոլոր պատմաբանների և այլն, աշխարհի հնագույն սուրբ պատմությունը. միակ անթերի ապացույցները, որ ունենք:

169 Կարդացե՛ք *«Մեր կիրակնօրյա այցելուն»* կամ կաթոլիկ եկեղեցու կատեխիզիսը և տեսեք, թե ինչ

են ասում. «Բողոքականներից ոմանք հավանաբար կփրկվեն, որովհետև նրանք խոնահրվում են կաթոլիկ վարդապետության առջև. որովհետև նրանց Աստվածաշունչն ասում է «մկրտվեք Հիսուս Քրիստոսի Անունով», բայց մենք վերացրել ենք «Հիսուսի Անվան» կարևորությունը և դրել ենք «Հոր, Որդու և Սուրբ Հոգու վրա», և նրանք ընդունում են դա»:

Հիմա, ցույց տվեք ինձ սուրբգրային մի համար, որը հակառակ է դրան:

170 Եվ ահա դուք: Եվ այնուամենայնիվ աշխարհը խոնարհվում է դրա առջև: Ինչի՞: Նրանք երբեք չեն եղել Գողգոթայում: Ահա թե ինչ: Երբեք չեն տեսել:

171 Նրանք կծաղրեն ձեզ և կանվանեն...նույնիսկ կկոչեն «սուրբ թռչկոտողներ», «Միայն Հիսուս», և բոլոր այդ ֆանատիկ անունները, որոնք կարող են տալ: Ի՞նչ տարբերություն, թե ինչպես են ձեզ անվանում: Ինչպե՞ս էին նրանք...Արդյոք Հիսուսին հետաքրքի՞ր էր, թե ինչպես էին նրան անվանում: Նա խաչվեց: Նա ապրեց Աստծո և միայն Աստծո համար: Եվ եթե այդ նույն Հոգին, որ Նրա մեջ էր, ձեզանում է, ձեզ էլ կմղի նույն բանն անելու. կրելով Իր Անունը: *«Ինչ որ անեք»* (ասում է Աստվածաշունչը) *«թե՛ խոսքով և թե՛ գործով, բոլորը Հիսուսի Անունով արեք, փառք տալով Աստծուն»:*

172 Որտդեղի՞ց եք վերցրել այդ երրորդության հեթանոսական ուսմունքը: Կատեխիզիսից, ոչ թե Սուրբ Գրքից: «Երրորդություն» բառը ամբողջ Սուրբ Գրքում՝ Ծննդոց գրքից մինչև Հայտնություն նույնիսկ չի էլ հիշատակվում: Նման բան չկա: Չկա նման բան ինչպես եռակի աստված: Նա է Աստված, միակ Աստված, մեկ Աստված: Միշտ էլ մեկ Աստված է եղել: Նա ծառայել է երեք գործառույթներում. մի անգամ ծառայել է որպես Հայր Մովսեսի օրոք, մի անգամ մարմնով որպես Որդի՝ Հիսուս: Իսկ հիմա ծառայում է որպես Սուրբ Հոգի: Բայց դա մեկ Աստված է: Մեկ Աստված, ոչ թե երեք անուններով: Երեք գործեր երեք տիտղոսներ մեկ Անվան մեջ՝ Հիսուս Քրիստոս:

173 Ցանկացած այլ բան հեթանոսություն է, և ես կխնդրեմ, որ ինչ-որ մեկը ցույց տա ինձ, եթե դա այդպես չէ: Դա ճիշտ է: Տարեցտարի, տարիներով ես ասում եմ դա, բայց դեռ ոչ ոք չի արել դա (հասկանո՞ւմ եք), որովհետև դա անհնար է: Ես ունեմ...նախ, ահա Աստվածաշունչը, բացի այդ կան հին պատմական փաստեր, որոնք

ապացուցում են, որ դա միանգամայն ճիշտ է: Եվ ինչո՞ւ սատանան պարզապես…? Ես…Աստվածաշունչն է ասում, որ նրանք այդպիսին են լինելու. «Ինչպե՞ս կարող են գալ, եթե Ես չձգեմ նրանց»: Էլ ի՞նչ կարող եմ ասել: Հիսուսն այդպես ասաց, ուստի…

174 Ես դա չեմ ասում, որ…Եթե ասել եմ դա, և նման քարոզում եմ անում, ապա ես ամենաստոր կեղծավորը կլինեի ձեր մեջ: Դա ճիշտ է: Ես ասում եմ դա, որովհետև դա Ճշմարտություն և Կյանք է: Բոլոր նրանք, ովքեր Քրիստոսով մկրտվեցին, Քրիստոսին հագան: Նրանք կյանք ունեն Իր Անունով:

175 Մենք աղոթում ենք Նրա Անունով, փնտրում ենք Նրա Անունով, քարոզում ենք Նրա Անունով, մկրտվում ենք Նրա Անունով, ապրում ենք Նրա Անունով, մեռնում ենք Նրա Անունով, երկինք ենք գնում Նրա Անունով, հարություն ենք առնում Նրա Անունով: «Ամբողջ ընտանիքը երկնքում կոչվում է Հիսուս»: Աստվածաշունչն է այդպես ասում. «Ամբողջ ընտանիքը երկրի վրա կոչվում է Հիսուս»: Նա ասաց. *«Ես եկա Իմ…»:*

Դուք ասում եք. «Դե, դա Հոր Անունն է»:

Հայրը անուն չէ, այլ տիտղոս է: Նա ասաց. *«Ես Իմ Հոր Անունովն եկա, և Ինձ չընդունեցիք»:* Հիմա, ի՞նչ Անունով եկավ: Ըհ՛ը: Անշուշտ *«…և Ինձ չընդունեցիք»:*

176 Ահա խնդրեմ. դա պարզապես, այո, դա թագնված է իմաստունների և գիտունների աչքերից: Անկասկած, անշուշտ, ըհ՛ը:

177 Հայտնության գրքում, ինչպես սովորեցինք նախորդ օրը, կար հին պոռնիկ եկեղեցի, որն առաջին կազմակերպությունն է, հետո նա ունեցավ դուստր խմբեր, ովքեր ծնվեցին նրանից: Նրանք նույն բանն են անում, նույն սովորությունն է: Այդ ամենն ավարտվում է Բաբելոնում, նույն ճանապարհով…Հռոմի եկեղեցու և ազգերի եկեղեցիների համադաշնության հետ, և ահա նա…բոլորը ոլորվում են, բոլորը նույն բանի մեջ են, նույն նավում:

178 Բայց Աստծո Եկեղեցին (ալելո՛ւիա), դուրս կանչված Եկեղեցի է, զատված: Ինչպե՞ս է կառուցված Եկեղեցին: Ինչպե՞ս կիմանաք սա: Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ սա Ճշմարտություն է: Երբ Աստված հայտնում է դա ձեզ: Ինչպե՞ս, ինչպե՞ս Աբելն իմացավ, որ խնձորների փոխարեն գառնուկ է պետք: Դա հայտնված էր իրեն.

«Հավատով Աբելն ավելի գերազանց զոհ մատուցեց Աստծուն»:

179 Այլակերպության լեռան վրայից իջնելիս, Հիսուսն ասում է. «Մարդիկ Իմ մասին ի՞նչ են ասում, թե ո՞վ եմ Ես»:

Ոմանք ասում են, թե Եղիան ես, մյուսները՝ Մովսեսը, և այլն:

Նա ասաց. «Բայց Ես ձեզ եմ հարցնում. «Դուք ի՞նչ եք ասում Իմ մասին, ո՞վ եմ Ես»:

Պետրոսն ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»:

180 Հիսուսն ասաց. «Դու դա չսովորեցիր...»: Այլ կերպ ասած (Ես սա ասում եմ, ոչ թե մեծ լինելու համար, այլ մի կետի վրա հանգելու). «Դու դա չսովորեցիր ինչ-որ ճեմարաններում, դա քեզ մարդը չսովորեցրեց, այլ՝ Իմ Հայրը, որ երկնքում է, հայտնեց քեզ, որ ԵՍ ԵՄ (ոչ թե Հայր, Որդի, Սուրբ Հոգի, այլ Ես եմ Հիսուս Քրիստոսը): Եվ այս վեմի վրա (ի՞նչ վեմ: Նույն վեմը, որի մոտ Աբելը գնաց. այդ նույն վեմի վրա), այս վեմի վրա՝ Աստծո հայտնած հոգևոր Ճշմարտության վրա, Ես կշինեմ Իմ Եկեղեցին և դժոխքի դռները չեն հաղթի նրան»: Ճիշտ է: Նրանք փորձում են դա անել, բայց երբեք չեն հաղթի: Հասկանո՞ւմ եք:

181 Դրա համար պարզապես գնացեք Գողգոթա, խաչվեք, վերադարձեք և ընտրեք ձեր ճանապարհը արհամարհվածների փոքր խմբի հետ, որոնք Տիրոջն են պատկանում, շարժվեք առաջ:

182 Այժմ, Տե՛ր, մենք ամեն բան Քո ձեռքերի մեջ ենք հանձնում: Ես չգիտեմ, այս խմբից դուրս, ինչ է այստեղ: Ես ոչ մի գաղափար չունեմ, Տեր, եթե Դու դա չհայտնես: Եվ հիմա, Հա՛յր Աստված, ես չեմ խնդրում, որ Դու դա անես: Ես պարզապես դա դրել եմ մարդկանց ձեռքերի մեջ: Ահա նրանք: Թող սա իսկական Գողգոթա լինի այս առավոտ, թող դա լինի իսկական խաչելություն մեր սեփական կամքի և սեփական ցանկությունների և կյանքի մեծ բաների համար:

183 Թող մարդիկ խոնարհ լինեն և կամենան ճանապարհ գնալ արհամարհվածների փոքր խմբի հետ, որոնք Տիրոջն են պատկանում: Թող նրանք խոնարհությամբ քայլեն: Թող ծնվեն Թագավորության՝ Աստծո այս մեծ Թագավորության մեջ, որը հոգևոր մարմինն է՝ Քրիստոսի

երկնային մարմինը երկրի վրա. *«Որովհետև մե՛կ Հոգով մենք բոլորս մկրտվեցինք մեկ մարմին լինելու համար»։*

184 Շնորհի՛ր դա, Տե՛ր։ Լինեն սևամորթ, սպիտակամորթ, դեղնամորթ, թխամորթ, ով էլ որ լինեն, տղամարդ թե կին, ծառա թե ազատ. մենք բոլորս մեկ Հոգուց խմեցինք։

185 Շնորհի՛ր այդ, Հա՛յր. և թող դա լինի...շատերի մեջ այս առավոտ, որպեսզի հասկանան, բաց արա նրանց հասկացողությունը։ Այդ ժամանակ դա նոր օրվա պես կլինի նրանց համար. արևը կփայլի և մարդկանց ձեռքով ստեղծված աստվածաբանությունների մոայլ լույսը կցվրվի, և Աստծո Լույսն իրենց ճանապարհի վրա կփայլի և կպատռի այն վարագույրը, որ փակում է այդ գեղեցիկ Լույսը։ Եվ նրանք կկարողանան քայլել սրբության ճանապարհով, ապրելով ուրիշների համար, ինչպես որ Քրիստոսն արեց։

186 Հիմա, մինչ մենք կազմում ենք աղոթքի շարքը, խնդրում եմ, որ Դու օծես Քո ծառաներին, մեզ բոլորիս այս առավոտ, բոլորիս, մինչ աղոթում ենք միմյանց համար։ Եվ շնորհիր, որ ամեն հիվանդ, ով անցնում է այս աղոթքի շարքով բժշկվի։ Թող նրանք վերադառնան, ինչպես շիլ աչքերով աղջիկը և փոքրիկ տղան և...և այդ տարեց կնոջ և, և եղբայր Ռայթի և ուրիշ շատերի նման, ովքեր դուրս եկան, Տե՛ր, հիվանդություններով և տկարություններով և այլն, որոնց բժշկները չեին կարողացել բժշկել, և ահա նրանք այսօր այստեղ են (մոտ մեկ շաբաթ անց), և ահա նրանք այսօր առողջ են։

187 Ո՛վ Աստված, թող տղամարդիկ և կանայք անցնեն այստեղով այդ նույն հավատքով, իմանալով, որ նրանք գնում են Գողգոթա՝ խաչվելու իրենց մտքերի և գաղափարների համար, որ իբր իրենք չեն կարող բժշկվել։ Թող այն զորությունը, որ Հիսուսին հարություն տվեց գերեզմանից, կյանք շնորհի նրանց, հավատքի մեծ կյանք։

188 Այնուհետև անմիջապես դրանից հետո թող շատերը մոտենան լողավազանին մկրտության համար։ Խնդրում ենք Հիսուսի Անունով։ Ամեն։

189 Մենք ընդամենը քսան րոպե ունենք աղոթքի շարք և մկրտության ծառայություն անցկացնելու համար։ Մենք հիմա աղոթքի քարտեր չունենք։ Դադարեցրել ենք դա, և կփորձենք դրանք աշխատացնել իմ ավելի մեծ հավաքույթների ժամանակ, երբ էլ որ սկսենք։ Ես ձեզ

բոլորիդ ասել էի, որ մենք դադարեցրել ենք դա, ձայներիզի վրա դա ունենք, և ես որտեղ էլ գնամ, այս ձայներիզները նախապես կուղարկվեն:

190 Նշանը միայն ցույց է տալիս օրհնության վրա: Գաղափարը հետևյալն էր. «Եթե աղոթելու ես հիվանդների համար, դրդիր մարդկանց քեզ հավատալու»:

Ես ասացի. «Նրանք ինձ չեն հավատա»:

Նա ասաց. «Քեզ կտրվի երեք նշան, և դրա միջոցով նրանք կհավատան»: Նշանները տաս տարի է նորից ու նորից գործել են ամբողջ աշխարհում, և ոչ մի անգամ չեն ձախողվել: Ոչ մի անգամ ձախողում չի եղել դրանում: Գանի՞սը գիտեն, որ դա ճշմարտություն է:

191 Եթե դուք կարող եք հավատալ նշանին, ուրեմն հավատացեք նաև Պատգամին: Դա ճիշտ է: Դա ցույց է տալիս դա: Մի՞թե Աստված Պատգամ կդնի իմ մեջ (և թույլ կտա, որ այն այդպես կատարյալ լինի, որ ինչ որ...) և ես ձեզ ինչ-որ բան ասեմ, որ սուտ կլինի: Աստված նման բան թույլ չեր տա, որ ես անեմ: Ո՛չ, ո՛չ: Ո՛չ, ապրո՛ն: Ես ձեզ Ճշմարտությունն են ասում:

192 Հիմա, բոլոր նրանք, ովքեր ուզում են, որ նրանց համար աղոթեն, մի տեսակ, այս շարքում այստեղ, անցեք այս կողմ, եթե ուզում եք, այստեղ, աջ կողմում շարվեք: Դա թույլ կտա, որ մարդիկ անցնեն, մինչ մենք աղոթում ենք: Հետո կխնդրենք տղաներին, դռնապաններին և մնացածին հսկել. և երբ նրանք կանցնեն այստեղով, հետո նրանք, ովքեր այս կողմում են հետևի կողմից կանցկացնենք և կբերենք այստեղ, որպեսզի բոլորի համար աղոթք արվի:

193 [Ինչ-որ մեկը խոսում է Բրանհամ եղբոր հետ: Ծան. խմբ.]: Ո՛հ, ոչ, չէ, ես չէ: Ցանկացած ժամին, երբ կցանկանաք: Կարևոր չէ: Կարող եք բերել նրան, կամ...ես կարող եմ...հիմա բերեք նրան այնտեղ կամ մի փոքր ուշ, երբ ուզում է, կարևոր չէ:

194 Հիմա, եկե՛ք հաջորդ մի քանի րոպեների ընթացքում որքան հնարավոր է հանգիստ մնանք: Ուզում եմ, որ հիմա բոլորդ խորհեք: Հիմա, ի՞նչ է, ի՞նչ է ասում Աստվածաշունչը: *«Հավատով արված աղոթքը կփրկի հիվանդին»:* Քանի՞սը գիտեն, որ դա ճիշտ է: Քանի՞սը գիտեն, որ Աստվածաշունչն ասում է. *«Նրանց էլ, ովքեր կհավատան այս նշանները կհետևեն: Դուք էլ կանեք Իմ*

արած գործերը»: Եվ ի՞նչ գործեր էին: Նա ասաց. «Ես կարող եմ, եթե հավատում եք, որ կարող եմ այդ անել»: Ճի՞շտ է:

Իմ հարցն ի՞նչ էր: «Նրանք ինձ չեն հավատա»:

Նա ասաց. «Այս նշանները նրանց կմղեն հավատալ»:

195 Հիմա, եթե հավատում եք, պատրաստվեք: Սա ձեր ազատագրման ժամն է: Ճիշտ այնպես, ինչպես դա կլիներ մեղքի համար, սա նույն Աստծո նույն խոստումն է:

196 Հիմա, այստեղ հիվանդ մի կին կա, ով ստամոքսի խնդիր ունի, Նյու Օլբանիից: Նախ մենք կաղոթենք նրա համար, որպեսզի կարողանա, կարողանա նստել: Հիմա թող բոլորը հանգիստ մնան: Ես ուզում եմ, որ եղբայրները օգնեն ինձ այստեղ: Եվ եկե՛ք մի պահ հիմա խոնարհենք մեր գլուխները աղոթքի համար:

197 Երկնայի՛ն Հայր, սա Քո Խոսքն է եղել: Ես պատասխանատու չեմ այն գործողությունների համար, որոնք ընդունվելու են դրա հիման վրա, այլ պատասխանատու եմ այն քարոզելու համար: Ես իմանալով սա (և այն, որ ես հիմա միջին տարիքի մարդ եմ և մի օր պետք է հանդիպեմ Քեզ): Ես ի սրտե քարոզել եմ ճշմարտությունը: Դու դա գիտես: Ոչ թե նախապաշարմունք լինի, եթե դա այդպես լիներ, Տե՛ր, ուրեմն ես ապաշխարության կարիք կունենայի:

198 Հա՛յր, խնդրում եմ, որ Դու հիմա օգնես ինձ, երբ աղոթելու ենք հիվանդների համար, թող իմ աղոթքներին պատասխան տրվի, ոչ միայն իմ աղոթքներին, Տե՛ր, այլ այս եկեղեցու աղոթքին, մինչ այս խեղճ մարդիկ...Ի՞նչ կլիներ, եթե սա իմ կինը լիներ կանգնած այստեղ: Ի՞նչ կլիներ, եթե նա լիներ անվասայլակի մեջ նստած: Կամ իմ քույրի՞կը: Իմ մայրի՞կը: Ո՛հ, Աստված, բժշկիր այս մարդկանց: Կբժշկե՞ս, Տե՛ր:

199 Նայի՛ր, աղոթքի շարքում կանգնած են՝ սրտի հիվանդությունով, քաղցկեղով, ուռուցքով, բոլոր տեսակի հիվանդություններով և տկարություններով: Նրանցից շատերը գալիս են (հարյուրավոնները հենց այստեղից ազատագրվում են, Տե՛ր), և նրանք տեսնում և հավատում են դրան, և գալիս են աղոթքի շարքի մեջ՝ իրենց բժշկությունը ընդունելու: Նրանք հիմա գալիս են ոչ թե Քո ծառայի, այլ կենդանի Քարի՝ Քո Որդու՝ Հիսուսի մոտ, Ով եկեղեցու Առաջնորդն է, հոգևոր, խորհրդավոր Անձնավորությունը մեր մեջ: Եվ քանի որ մենք գնում ենք

առաջարկելով Նրա Անունը (Դու ասացիր. «Իմ Անունով դևեր կհանեն»), խնդրում եմ, որ պատասխանես մեր աղոթքներին Հիսուսի Անունով: Ամեն:

200 Հիմա, թող ամեն մեկը աղոթքի մեջ լինի: Հիմա, մասամբ սա էլ ձերն է, ձեր աղոթքն էլ է:

Այս կինը հիմա պետք է մահանա, եթե Ինչ-որ մեկը չօգնի նրան:

201 Քանի՞սն են ճանաչում եղբայր Ստադսկլեվին: Եղբայր և քույր Ստադսկլեվներին: Օրերս երեք անգամ Գերմանիայից զանգ ստացա. նրանց երեխան մահացել էր: Նրանք խնդրեցին. «Բրանհա՛մ եղբայր, մենք տեսել ենք, թե ինչպես եք Աստծո Հոգով հարություն տալիս մեռելներին», (նրանք ներկա էին և տեսել էին դա: Հասկանո՞ւմ եք), «գիտենք նաև, որ դուք Տիրոջ մարգարեն եք: Միայն մեկ խոսք ասեք»:

Ասացի. «Ես չեմ կարող դա ասել, եթե այն չդրվի իմ բերանում»:

«Եկե՛ք Գերմանիա»: Ես արագ վեր կացա: Նրանք զանգահարեցին. «Մենք ռեակտիվ ինքնաթիռ ենք գտել, որը վեց ժամում կարող է ձեզ Գերմանիա հասցնել»: Զինվորական ինքնաթիռն ինձ կհասցներ Գերմանիա, որ հարություն տամ մեռած երեխային: Զինվորական ռեակտիվ ինքնաթիռը վեց ժամում Լուիզիանայից ինձ կհասցներ Մունխեն՝ Գերմանիա:

202 Ես մտա սենյակ, ծնկի եկա և ասացի. «Հա՛յր, ես ի՞նչ պետք է ասեմ: Խոսի՛ր իմ շրթունքներով»: Նա ինձ չպատասխանեց: Գնացի անտառ, ասացի. «Հա՛յր, ես ի՞նչ պետք է ասեմ»: Դի՛ր խոսքեր իմ շուրթերում, այլապես իմ գնալը զուր կլինի»: Վերադարձա, Նա ինձ չէր պատասխանել: Ներս մտա: Ողջ գիշեր աղոթեցի. «Տե՛ր, դի՛ր խոսքեր իմ բերանում»: Պատասխան չկար:

203 Հաջորդ առավոտ կինս վեր կացավ: Հենց որ նա հեռացավ, Խոսքը (ես կանգնեցի), Նա ասաց. «Մի՛ հանդիմանիր սրան: Սա Տիրոջ ձեռքն է»: Ըհ՛ը:

Այդ ժամանակ արագ զանգահարեցի. «Ես չեմ կարող գալ: Ո՛չ, սա Տիրոջ ձեռքն է: Ինձ արգելվեց»: Տեսնո՞ւմ եք, թե ինչ ուժ կա այդ հանդիմանության վրա: Երբ Աստված ասաց. «Մի՛ արա դա, որովհետև սա Տիրոջ ձեռքն է»:

204 Մի անգամ Մովսեսին ասվեց չանել մի բան, բայց այուամենայնիվ նա գնաց և արեց դա: Հիշո՞ւմ եք: Դրա համար ես, ես չգնացի:

205 Ես կարող էի նաև բերել հայտարարություններ, ցույց տալու համար չորս տարբեր մարդկանց, ովքեր բժիշկների կողմից մահացած են հայտարարվել աղոթքից և մահվանը հանդիմանելուց հետո: Հասկանո՞ւմ եք: Մենք կանգնում ենք այնտեղ և հանդիմանում ենք այդ բանը: Եվ եթե Աստված ձեզ իշխանություն է տվել ինչ-որ բան անելու, ավելի լավ է զգույշ լինեք, թե ինչ եք անում: Հասկանո՞ւմ եք: Ավելի լավ է զգույ-...Նա ասաց. «Մի՛...»:

206 Հիմա, հիշե՛ք, ձեզ համար դա կարող է այնքան էլ կարևոր չթվա, բայց ինչ համար դա կարևոր էր: Հասկանո՞ւմ եք:

«Մի՛ հանդիմանիր այն»: Իսկական, քաղծր, բարի Ձայնը (կարծեմ դա վեցանց կեսերի մոտ էր, առավոտվա վեցանց կեսի կողմերն էր) ասաց. «Մի՛ հանդիմանիր սրան: Սա Տիրոջ ձեռքն է»:

Ես ասացի. «Շնորհակալություն, Հայր: Շնորհակալություն, Տեր: Ես դա չեմ անի»:

207 Եթե Նա ասեր. «Հանդիմանի՛ր սրան: Սա թշնամին է սողոսկել»:

Կասեի. «Գնացինք»: Եվ դա կարվեր:

208 Երբ այդ փոքրիկ տղան Ֆինլանդիայում պառկած էր այնտեղ մեռած, լիճված, նույնիսկ առողջ ոսկոր չէր մնացել իր մարմնում, Տերն ասաց, որ դա սատանայի մատն էր, և ասաց. «Հանդիմանի՛ր սրան»:

209 Եվ ես ասացի. «Մա՛հ, դու չես կարող նրան պահել: Հե՛տ բեր, արձակի՛ր նրան»: Նա միանգամից ոտքի ցատկեց, առողջ, նույնիսկ մի կոտրված ոսկոր չկար իր մարմնում: Դա Տիրոջ Խոսքն էր: Ես չեմ կարող կիրառել Տիրոջ Խոսքը մինչև Այն չգա ինձ մոտ:

210 Բայց Աստվածաշնչում Տիրոջ Խոսքը հանձնարարություն է տվել ինձ աղոթել այս հիվանդ մարդկանց համար, ձեզ հանձնարարություն է տալիս աղոթել նրանց համար: Հիմա՝ *«հավատով արված աղոթքը կփրկի հիվանդին»,* եկե՛ք աղոթենք, խոնարհեք ձեր գլուխները. կտեսնենք, թե ինչ է ասելու Նա, մինչ անցնում եք այստեղով:

211 Դուք քրիստոնյա եք, այդպես չէ՞: Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով, որ Հիսուսը ձեզ կբժշկի: Մի քիչ ստամոքսի խնդիր ունեք, տարիներ շարունակ տառապել եք դրանով, քույր: Հիմա, դուք կբժշկվեք, եթե հավատաք:

212 Տե՛ր Աստված, այս երիտասարդ կինը պետք է մեռնի, եթե Դու չօգնես նրան: Հիմա ես աղոթում եմ, մինչ նայում եմ նրան վրա, ես ոչ մի պատճառ չեմ տեսնում, որ նա մեռնի:

Եվ ես զգում եմ իմ հոգում, Տե՛ր, որ դա Քո թույլ տված կամքն է հիմա, որ ես հանդիմանեմ սրան. սատանա՛, արձակի՛ր նրան:

Հիսուս Քրիստոսի Անունով թող նա առողջանա, գա այս եկեղեցի և վկայություն տա Աստծո փառքի համար: Ամեն:

213 Հիմա, որքան էլ պարզ է սա, տիկին, դուք բժշկվելու եք: Հավատո՞ւմ եք դրան, եղբա՛յր:

Դուք, որ նստած եք այստեղ հավատո՞ւմ եք, որ բժշկվելու եք: Գնացե՛ք հիմա և սկսեք ուտել ինչ որ...այդ ժամ ամեն ինչ լավ կլինի:

Հիմա, դուք ակնկալում եք հարվածել աշխարհին և կաթվածահար անել. մինչդեռ նա է ձեզ հարվածում և կաթվածահար անում: Հիմա, երկնքի Աստվածը, ով հեռացնում է հարվածը աշխարհից՝ մեղքերի թողություն տալու համար, այդ նույն Անունով կարող է ձեզ մեղքերի թողություն տալ, հեռացնել հարվածը ձեզանից և բժշկել ձեզ:

Հավատո՞ւմ եք, որ Նա կարող է կարգավորել այդ սրտի բաբախումը: Եթե հավատում եք, լավ կլինեք...?...

214 Տե՛ր Հիսուս, այս խեղճ կինը պետք է իր կյանքի մնացած մասը անցկացնի այս անվասայլակի մեջ, իսկ հետո վեր առնվի: Բայց մենք խնդրում ենք, որ սատանայի ուժը հեռացվի նրանից: Թող նա ապրի, քայլի և առաջվա պես նորմալ լինի: Մենք դա խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

215 Հավատո՞ւմ եք: Դա ավատրված գործ է, կատարված է: Ի՞նչ է պատահել: Առանց ոչ մի վախի, առանց ոչ մի...Չէր...? Մի անգամ դուք բժշկվել եք քաղցկեղից...?... Ազատվե՛ք, ամեն բան հանձնեք Հիսուսին:

216 Տե՛ր Հիսուս, ես դնում եմ իմ ձեռքը այս կնոջ վրա և վոնդում եմ նրա հիվանդությունը: Ես գիտեմ, որ նա քրիստոնյա է՝ Հոգուց ծնված: Ես դա վերցնում եմ նրանից Հիսուս Քրիստոսի հրաշալի Անունով: Ամեն:

217 Տե՛ր Աստված, նրա թանկագին եղբոր համար, ես խնդրում եմ նրա փրկության համար Հիսուսի Անունով: Կանգնե՛ք դրա վրա: Ամե՛ն: Կլինի՛:

218 Պատրա՞ստ ես ստանալու քո բժշկությունը, որդյա՛կ: Լավ, Նրա բազուկը կհեռացնի այն:

219 Տե՛ր Հիսուս, այս երիտասարդի վրա, ով ասաց, որ աղոթում է, որ Քեզանից բժշկություն ստանա: Որպես Քո ծառան ես դնում եմ իմ ձեռքերը նրա վրա Հիսուս Քրիստոսի Անունով...?...Ամեն:

Հիմա, ցանկացած...?...հիմա, պազպազպես կանչեք Նրա Անունը: Հիմա, ոչ, ոչ թե ինձ...?...

220 Հա՛յր Աստված, սա միակ տղան է, ով մի ժամանակ պառկել է մոր կրծքին, նա շոյել է իրեն և, և աղոթել է նրա հետ միասին, պահել է նրա թաթիկները, երբ նա ընդամենը թոթովող երեխա էր: Հիմա, սատանան դրել է նրան հոգեբուժարանում: Ո՛վ Աստված, նա եկել է կենդանի Աստծո սուրբ Եկեղեցի՝ Աստծո Հոգուց ծնված Եկեղեցի, Եկեղեցի, որում ապրում է Աստծո Հոգին, և հայտնում է Իրեն: Եվ այսօր, աղոթքի միջոցով մենք ազատում ենք այդ կնոջը այդ գոյացությունից: Խնդրում ենք Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

Վերադարձե՛ք տուն, ամեն բան լավ կլինի:

Շնորհակալություն, որ եկաք և խնդրեցիք ձեր մոր համար. սա իսկական որդի է:

221 Սա ձեր ազատագրման օրն է: Տե՛ր Հիսուս, խնդրում ենք այս երիտասարդ կնոջ, նրա ամուսնու փրկության և նրա կոկորդի բժշկության համար, թող նա ստանա դա Հիսուս Քրիստոսի Անունով, Ով ասում է՝ «ե՛կ և հավատա դրան հիմա», և սա վերջացած գործ է:

222 Տե՛ր, բժիշկները հայտարարել են, Տե՛ր, որ դա նրա մարմնի մեջ է և ներթափանցում է աչքի մեջ: Նա եկել է այս խորանի մոտ ազատագրվելու համար, մինչ այս սուրբ Եկեղեցին աղոթում է, ես խնդրում եմ նրա ազատագրման համար Հիսուս Քրիստոսի Անունով, այս պատուհասը կհեռանա նրա մարմնից: Սա ավարտված գործ է:

Նրա որդու համար, ես օրհնում եմ այս թաշկինակը: Թող լսողությունն ու ճիշտ վիճակը վերադառնա ականջին...?...

223 Եկեղեցին հիմա խոսում է. հիմա Եկեղեցին Քրիստոսի խորհրդավոր Մարմին է: Մենք բոլորս աղոթում ենք

ձեզ համար։ Հասկանո՞ւմ եք։ Մենք չենք, մենք չենք դավանում, որ այլևս աշխարհում չենք։ Մենք չենք խոսում այն մասին, թե ուր ենք գնում։ Մենք գտել ենք Ճանապարհը։ Մենք ծնվել ենք այդ Ճանապարհում։ Մենք կենդանի Աստծո Եկեղեցին ենք (դրա մի մասնիկն ենք), անշուշտ, այն սփռված է ամբողջ աշխարհով մեկ։ Բայց սա նրանց խումբն է։ Այսօր մենք միասին գալիս ենք Նրա Անունով։ Մենք գալիս ենք անելու այն, ինչ Նա ասել էր, որ անենք։ Այն, ինչ Ինքը չի կարող հայտնել, երբ հավաքվում ենք միասին՝ աղոթել հիվանդների համար, դնել ձեռքերը նրանց վրա *«հավատով արված աղոթքը կփրկի հիվանդին»։*

224 Թող ձեր սրտի հիվանդությունը հեռանա ձեզանից։ Հիսուս Քրիստոսի Անունով ես հնազանդվում եմ այն հանձնարարությանը, որ Աստված տվել է ինձ…?… 🕊

60-0925 Այն օրը Գողգոթայի վրա
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org